

մ ա թ տ

1/47

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2019

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2019
N 1 (47)

Գիտական հանդես

Հրատարակվում է 2008 թվականից

Լույս է տեսնում տարեկան 2-4 անգամ

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574406

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.lawinstitute.am

Հանձնված է տպագրության 25.03.2019թ.

Տպագրությունը՝ լագերային-թվային, ֆորմատ A4:

Տպաքանակը՝ 100 օրինակ:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
հասցեն՝ ք.Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էլեկտրոնու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Վիգեն Քոչարյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, խմբագրական խորհուրդի նախագահ:

Vigen Kocharyan – (President) Deputy Minister of Justice of the Republic of Armenia, PhD in Law.

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր:

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief editor.

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor.

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor.

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Volodya Hovhannisyanyan – Doctor of Law, Associate Professor.

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Yesayan – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր:

Grigor Badiryan – Doctor of Law.

Ստեփան Ծաղիկյան – Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian (Slavonic) University, Doctor of Law, Professor.

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor.

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor.

Ժորա Ջհանգիրյան – «Գլադզոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor.

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ruben Avagyan – Rector of “Mane” University, Doctor of Law, Professor.

Արփիհն Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor.

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Suren Krmoyan – PhD in Law.

Գրիգոր Մինասյան – «AM» իրավաբանական ընկերության կառավարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու:

Grigor Minasyan - Manager of “AM” Law Firm, PhD in Law.

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor.

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Գարիկ Քեռյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Mushegh Hovsepyan – Head of Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor.

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Eduard Ghazaryan – Dean of the Economics Faculty of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor.

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Hayk Kupelyants – PhD in Law.

Ալեքսանդր Արիմով – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության գեներալ-մայոր:

Aleksandr Krimov – Head of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, General-Major of Internal Service.

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

Andrey Skiba – Head of Chair of Criminal and Executive Right of Legal Faculty of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, Major of Internal Service.

Եվգենի Բարաշ – Ուկրաինայի պետական քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Evgeniy Barash – Head of the Criminal and Penal Service Institute, General-Major of Internal Service, Doctor of Legal Sciences, Associate Professor.

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Social Sciences.

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի պատվավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Chernyavsky – Vice Rector of National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Legal Sciences, Professor.

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right, Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs Doctor of Legal Sciences, Associate Professor of the All-Russian State University of Justice.

Կոնստանտին Գուսարով – Ուկրաինայի Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Process of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Legal Sciences, Professor.

Վիտալիյ Ստուկանով – «Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա» կրթական հաստատության հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Vitaly Stukanov – Professor of the Chair of Psychology and Pedagogics of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogics Sciences, PhD in Psychology, Associate Professor.

Ալեքսանդր Ռուբիս – «Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա» կրթական հաստատության քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Aleksandr Rubis – Professor of the Chair of Criminal Process of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Legal Sciences, Professor.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Սիլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Մանյա Փաշինյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 6 ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ԴՈՒԿԱՍՅԱՆ
ՀՀ-ում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության որոշ հարցերի շուրջ
- 14 ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ
ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ
Ժառանգական զանգվածի նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ վեճը որպես նոտարական գործողության կատարման կասեցման հիմք.
Փորձի վերլուծություն
- 18 ԱՐՓԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ
Տեղական ինքնակառավարման գիտական մոտեցումները.
Պատմաիրավական ակնարկ
- 22 ՍԱՐԳԻՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Պետության անվտանգության և սահմանադրական անվտանգության հարաբերակցության հիմնահարցի շուրջ.
Տեսական-իրավական վերլուծություն
- 26 ԶԱՐՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՆ
Պահանջմունքների անբավարարությունը՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ
- 36 ОЛЕСЯ ЗАРУБИНА
ОЛЬГА АКЧУРИНА
ГАЙК КОЧИНЯН
К вопросу вещевого обеспечения сотрудников
пенитенциарных учреждений России и Армении
- 40 ЛЮДМИЛА НОВИКОВА
НАТАЛЬЯ ЖАРКО
НУРГУЛЬ АТТОКУРОВА
КОРЮН МКРТЧЯН
О некоторых признаках, свидетельствующих о подготовке осужденного
к совершению побега из исправительного учреждения

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն
և քրեակատարողական քաղաքականության մշակման
վարչության պետի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ-ՈՒՄ ԽՆԱՍԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Հոգվածում վերլուծվել են խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից հանձնաժողովների ինստիտուցիոնալ կառուցվածքի, վերջիններիս գործունեության արդյունավետության հարցերը, ներկայացվել են հանձնաժողովների ինստիտուցիոնալ կառուցվածքի բարեփոխման հնարավոր տարբերակները:

Հիմնաբառեր- խնամակալություն և հոգաբարձություն, հանձնաժողովներ, երեխայի իրավունքներ:

Յուրաքանչյուր պետության քաղաքականության կարևորագույն ուղղություններից է երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ըստ այդմ՝ ընտանիքի նկատմամբ հատուկ վերաբերմունքի և ուշադրության ցուցաբերումը՝ որպես երեխայի բնականոն զարգացումը ապահովող կարևորագույն գործոն: Հաշվի առնելով երեխաների անհատականության բազմակողմանի զարգացման, վերջիններիս հատուկ հոգածություն և օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտությունը՝ երեխաների իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունն ընդգծվում է նաև միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, երեխաներին հատուկ հոգածություն տրամադրելու անհրաժեշտությունը նախատեսված է «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայով, 1959 թվականի նոյեմբերի 20-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած «Երեխայի իրավունքների հռչակագրով», «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերով և այլ միջազգային փաստաթղթերով: Երեխաների իրավունքների պաշտպանության խնդրի կարևորությունը ընդգծվում է նաև ՀՀ Սահմանադրությամբ¹ (այսուհետ՝ Սահմանադրություն) երե-

խաների իրավունքների՝ որպես հիմնական իրավունքների ամրագրմամբ: Ընդ որում՝ պատահական չէ նաև այն, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում՝ Սահմանադրության 86-րդ հոդվածով, որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ, սահմանադրորեն ամրագրվեց երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով՝ յուրաքանչյուր պետություն մշակում և իրականացնում է որոշակի քաղաքականություն: ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է եռաստիճան համակարգի միջոցով, որը ներդրվել է 2005 թվականից: Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի ձևավորմանը՝ համակարգի ոչ բոլոր օղակներն են արդյունավետ գործում, ինչը պայմանավորված է և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գործոններով: Այսպես՝ երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի օղակներն են՝

1) Ազգային հանձնաժողովը - ստեղծվել է ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835 որոշմամբ, իսկ Հանձնաժողովի նոր կանոնադրությունը և անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N

1295 որոշմամբ²:

2) Մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարզային բաժինները:

3) Տեղական ինքնակառավարման մարմինները՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները, ինչպես նաև դրանց կից հանձնաժողովները:

Նշվածի համատեքստում անդրադառնանք եռաստիճան համակարգից՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառնությունների ընդհանուր բնութագրին: Այսպես, խնամակալության և հոգաբարձության ինստիտուտը իր բնույթով համալիր ինստիտուտ է, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ խնամակալության և հոգաբարձության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիաիրավական, վարչաիրավական, ընտանեկան հարաբերությունները կարգավորող համապատասխան նորմերով: Այսպես, խնամակալության և հոգաբարձության հարցերը կարգավորվում են ՀՀ ընտանեկան օրենսգրքով³ (այսուհետ՝ Օրենսգրքը), ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում խնամակալության և հոգաբարձության մարմինների կարևորության վկայությունն է վերջիններիս վերապահված գործառնությունների լայն շրջանակը: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված հիմնական գործառնությունները նախատեսված են Օրենսգրքով: Այսպես՝ Օրենսգրքով վերջիններիս վերապահված գործառնությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց շրջանակը բավականին լայն է: Այդ գործառնությունները, ելնելով վերջիններիս էությունից և բովանդակությունից, կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ խմբերի՝

- գործառնություններ, որոնք կապված են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման, խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացման հետ,

- գործառնություններ, որոնք կապված են երեխային առնչվող հարցերով ծնողների կամ վերջիններիս և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունների լուծմանը,

- գործառնություններ, որոնք կապված են դատարանում որոշակի կատեգորիայի գործերով պար-

տադիր քննությանը մասնակցություն ապահովելուն,

- գործառնություններ, որ կապված են դատարանում երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով որոշակի հայցապահանջների ներկայացմանը,

- այլ գործառնություններ:

Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգում խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված կարևոր դերակատարմանը, այդ համակարգը դեռևս չի ապահովում անհրաժեշտ արդյունավետություն: Այս հանգամանքը արձանագրվել է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694 որոշմամբ արձանագրվել է, որ 2005 թվականին ՀՀ-ում ներդրված՝ երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը ունի ինստիտուցիոնալ-կառուցվածքային որոշ թերություններ, որոնք էականորեն ազդում են այդ բնագավառում վարվող քաղաքականության արդյունավետության վրա և, ըստ այդմ, որպես ռազմավարական կարևոր ուղղություն ընդգծվել է ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը ինստիտուցիոնալ-կազմակերպական բարեփոխումների ենթարկելու անհրաժեշտությունը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների, դրանց կից գործող հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը գնահատվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» 2017 թվականի արտահերթ հրապարակային զեկույցում, որտեղ որպես ոլորտի հիմնական խնդիրներ առանձնացվել են աշխատակազմի ցածր մոտիվացվածությունը, այդ մարմինների գործունեության վերահսկողության և անդամներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների անլիարժեքությունը, աշխատակազմի արհեստավարժության պակասը, վերջիններիս գործունեության մեթոդաբանության բացակայությունը⁴:

2012 թվականին ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին 45 հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված այլընտրան-

քային զեկույցում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները մատնանշվել են որպես եռաստիճան համակարգի ամենաթույլ օղակ, որոնց գործունեությունը կրում է ձևական բնույթ: «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին 2012 թվականին ներկայացված զեկույցում արձանագրվել է, որ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից կայացվող որոշումների մեծ մասը կայացվում է (լավագույն դեպքում) երեխային կամ ծնողին մեկ անգամ տեսնելուց հետո՝ առանց որևէ խորքային ուսումնասիրության և հետագա հսկողական աշխատանքի կատարման: «Լորդ Վիթն Հայաստան» կազմակերպության դիտարկումների համաձայն ևս՝ հաշվի առնելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության թերություններն ու խնդիրները՝ առավել նախընտրելի է աշխատանքը սոցիալական ինտեգրված ծառայությունների հետ⁵:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անդրադառնանք խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից հանձնաժողովների գործունեությանը, ինստիտուցիոնալ կառուցվածքին: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին և դրանց կից հանձնաժողովներին անդրադարձ է կատարվում Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ նշվում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Նշված հոդվածի նույն մասում սահմանվում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատում է համայնքի ղեկավարը: Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատում է ՀՀ կառավարությունը: Այսպես՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատված է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում)⁶: Որոշմամբ կարգավորվում են խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառնությունների, խնդիրների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետ կապված հար-

ցերը: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) հետ կապված հարցերը կարգավորվում են Որոշմամբ հաստատված կանոնադրության 4-րդ գլխում:

Հանձնաժողովի դերը և գործառնությունները: Հանձնաժողովը խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվող խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով (Որոշման 11-րդ կետ): Գործող կարգավորմամբ Հանձնաժողովի գործունեությունն իր բնույթով խորհրդատվական է, և Հանձնաժողովի անդամներն իրենց գործառնություններն իրականացնում են անհատույց, այն է՝ հասարակական հիմունքներով: Բնական է, որ նման կարգավորման առկայությունը բազում խնդիրներ է առաջացնում Հանձնաժողովի գործունեության արդյունավետության տեսանկյունից, քանի որ Հանձնաժողովը չի տիրապետում իր գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների: Հանձնաժողովի կազմում ընդգրկվող անդամները որպես Հանձնաժողովի անդամ՝ լրացուցիչ չեն վարձատրվում, և միաժամանակ, վերջիններս ծանրաբեռնված են այլ աշխատանքային պարտականությունների կատարմամբ, ինչը, միանշանակ, բացասական է ազդում նաև կատարվող աշխատանքի որակի վրա:

Այլ կերպ ասած՝ առանց որևէ վարձատրության նախատեսման դժվար է ակնկալել Հանձնաժողովի անդամի կողմից իր առջև դրված գործառնությունների պատշաճ իրացում, իսկ հաշվի առնելով այն, որ Հանձնաժողովը չունի նաև իր գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորում, ակնհայտ է, որ դրա ստեղծումը չի արդարացնում այն նպատակները, որոնց հասնելու համար ի սկզբանե նախատեսվել է նման հանձնաժողովի ստեղծումը: Ուշադրության է արժանի այն, որ օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Մեծ Բրիտանիայում, Լեհաստանում, Խորվաթիայում համանման մարմինները չեն գործում հասարակական հիմունքներով, և վերջիններիս իրենց գործառնությունների իրականացման համար հատկացվում են անհրաժեշտ նյութական միջոցներ⁷:

Անդրադառնանք նաև խնամակալության համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությանը և վերլուծությունը: Այսպես, Եվրոպական երկրներում, սովորաբար, խնամակալների նշա-

նակման համար պատասխանատու են դատարանները: Դատարանի կողմից խնամակալի նշանակումը կարող է հիմնվել անհատի կամ իրավասու պետական մարմնի դիմումի հիման վրա կամ դատարանի սեփական նախաձեռնությամբ: Ցանկացած անհատ կամ մարմին կարող է դիմել խնամակալության գործընթացը սկսելու համար՝ խնամքի կարիք ունեցող երեխայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելով երեխայի խնամքի հաստատություններ կամ ուղղակիորեն իրավասու դատարան: Սա վերաբերում է խնամքի կարիք ունեցող բոլոր երեխաներին՝ անկախ վերջիններիս ազգությունից: Պատասխանատու դատական մարմինները գնահատում են յուրաքանչյուր գործ և որոշում, թե արդյո՞ք խնամակալի նշանակման բոլոր անհրաժեշտ պայմանները պահպանված են: Դատարանները կարող են դիմել երեխաների պաշտպանության, բարեկեցության կամ այլ իրավասու մարմինների օժանդակությամբ:

Գերմանիայում, օրինակ, եթե խնամակալի նշանակման անհրաժեշտ պայմանները պահպանված են, ընտանեկան դատարանը որոշում է կայացնում երեխային խնամակալ նշանակելու մասին: Ընտանեկան դատարանը նշանակում է համապատասխան անձին որպես երեխայի խնամակալ՝ երիտասարդների բարեկեցության գրասենյակի դիրքորոշումը լսելուց հետո (վերջինս առաջարկում է խնամակալի թեկնածուին): Հրատապ դեպքերում, ընտանեկան դատարանը կարող է խնամակալ նշանակել առանց երիտասարդների բարեկեցության գրասենյակի դիրքորոշումը լսելու: Եթե հնարավոր չէ գտնել համապատասխան թեկնածու, ապա երիտասարդների բարեկեցության տեղական գրասենյակը կարող է նշանակվել որպես խնամակալ⁸:

Նիդեռլանդներում երեխայի ծնողները կարող են ընտրել որևէ կոնկրետ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու լինելու համար: Նրանք կարող են նաև Նիդեռլանդների ծնողական պատասխանատվության ռեգիստրում գրանցել կոնկրետ անձի տվյալները՝ իրենց մահվան դեպքում երեխայի խնամակալը կամ հոգաբարձուն լինելու համար: Մյուս իրավական հնարավորությունը դատարանի կողմից երեխայի խնամակալ նշանակելն է⁹:

ԵՄ անդամ պետությունների մեծամասնությունում խնամակալության և հոգաբարձության պարտականությունը դրված է վարչական կամ տեղական իշխանությունների վրա: ԵՄ անդամ շատ պե-

տություններ վստահում են խնամակալության գործառույթը համայնքային կամ տեղական սոցիալական ծառայություններին: Խնամակալության համար պատասխանատու կարող է լինել կենտրոնական որևէ հաստատություն՝ ամբողջ երկրի մակարդակով, կամ ռեգիոնալ կամ տեղական հաստատություն:

Լեհաստանում սոցիալական ծառայությունները ռեգիոնալ և տեղական մակարդակով նույնականացնում են համապատասխան գործերը, կազմակերպում են երեխաների խնամքը և նշում խնամակալ նշանակելու անհրաժեշտությունը: Օտարերկրացիների դեպքում, «Լեհաստանում օտարերկրացիների խնամակալության վերաբերյալ» 2003 թվականի հունիսի 13-ի օրենքը սահմանում է, որ խնամակալ կարող է նշանակվել գրասենյակի ղեկավարի (ազգային մակարդակի հաստատություն) դիմումի հիման վրա: Խնամակալության վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող մարմինը ընտանիքի դատարանն է, որը գործում է տեղական մակարդակում:

Լատվիայում, օրինակ, խնամակալներին նշանակում է ծնողագուրկ երեխաների դատարանը, որը տեղական ինքնակառավարման մարմինն ենթակա կազմակերպություն է¹⁰:

Վրաստանում խնամակալության և հոգաբարձության գործառույթները համակարգում են Առողջապահության, աշխատանքի և սոցիալական գործերի նախարարության հատուկ ծառայությունը՝ Խնամակալության և հոգաբարձության ստորաբաժանումը և դրա տարածքային գործակալությունները:

Խորվաթիայում այս գործառույթն իրականացնում են Սոցիալական ապահովության կենտրոնը և Խնամակալության կենտրոնը, որոնք հիմնադրվել են Սոցիալական ապահովության նախարարության կողմից¹¹:

Բելգիայի խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալության ծառայությունն է (Guardianship Service), որը գործում է Բելգիայի Արդարադատության նախարարության կազմում¹²:

Ֆինլանդիայի քաղաքացի հանդիսացող, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալության համար պատասխանատու են երեխաների պաշտպանության տեղական ծառայությունները¹³:

**Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության
նկատմամբ հսկողություն իրականացնող պատասխանատու մարմիններ**

ԵՄ անդամ պետություն	Արտաքին հսկողություն	Ներքին հսկողություն
Ավստրիա	Շրջանային դատարան	Երեխաների և երիտասարդների բարեկեցության գրասենյակներ
Բելգիա	Քաղաքացիական դատարան	Խնամակալության մարմին
Բուլղարիա	Երեխայի պաշտպանության պետական մարմին	Քաղաքապետարան
Կիպրոս	Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն	Երեխաների և ընտանիքի վարչության պետ, որին ենթակա են սոցիալական բարեկեցության գրասենյակները
Չեխիա	Դատարան, դատախազ	Երեխաների սոցիալական և իրավական ապահովության վարչություն
Գերմանիա	Ընտանեկան դատարան	Երիտասարդների բարեկեցության գրասենյակ
Դանիա	Դատարան	Համայնքային մակարդակով գործող պետական վարչակազմ, Կարմիր Խաչ
Էստոնիա	Դատարան	Քաղաքապետարան
Հունաստան	Դատարան	Չկա
Իսպանիա	Դատախազություն	Ինքնավար համայնքի երիտասարդության բարեկեցության իշխանություն
Հունգարիա	Արդարադատության նախարարության դատական ծառայությունների կենտրոն	Խնամակալության մարմին, Սոցիալական բարեկեցության և խնամակալության մարմին, Սոցիալական հարցերի և երեխաների պաշտպանության գլխավոր վարչություն
Իտալիա	Անչափահասների դատարան	Չկա
Լատվիա	Ծնողազուրկ երեխաների դատարան	Երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային մարմին
Ֆրանսիա	Դատարան	Չկա
Ֆինլանդիա	Ընտանեկան և երեխաների դատարան	Ֆինլանդական միգրացիոն ծառայության ներքո գործող ընդունելությունների կենտրոնները
Պորտուգալիա	Ընտանեկան և երեխաների դատարան	Չկա
Իռլանդիա	Ընտանեկան և երեխաների դատարան	Առողջության տեղեկատվության որակի կառավարման մարմին
Իտալիա	Անչափահասների դատարան	Չկա
Լիտվա	Դատարան	Երեխաների իրավունքների պաշտպանության համայնքային բաժանմունք
Լյուքսեմբուրգ	Դատարան	Ընտանիքի և ինտեգրման նախարարություն
Մալթա	Անչափահասների դատարան, Երեխաների և երիտասարդների խորհրդատվական խորհուրդ	Չկա
Հոլանդիա	Անչափահասների դատարան, երիտասարդների խնամքի տեսչություն	Չկա
Լեհաստան	Խնամակալության դատարան, ընտանեկան դատարան	Չկա
Ռումինիա	Դատարան	Սոցիալական աջակցության և երեխաների պաշտպանության գլխավոր վարչություն
Շվեդիա	Վարչաշրջանի խորհուրդ, որը ղեկավարվում է գլխավոր խնամակալի կողմից	Գլխավոր խնամակալ
Սլովենիա	Աշխատանքի, ընտանիքի, սոցիալական ապահովության և հավասար հնարավորությունների նախարարություն	Սոցիալական աշխատանքի կենտրոն
Սլովակիա	Դատարան	Աշխատանքի, սոցիալական հարցերի և ընտանեկան գրասենյակ
Միացյալ Թագավորություն	Չկա	Չկա ⁴

Այսպես, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով կարող ենք հանգել այն հետևության, որ այլ երկրներում խնամակալության և հոգաբարձության ոլորտում պատասխանատու են՝

* դատարանները,

* տեղական իշխանության ներկայացուցիչները,

* սոցիալական ծառայությունները,

* խնամատարության ծառայությունները (կարող են գործել արդարադատության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ այլ ենթակայության ներքո):

Համադրելով մաս միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, հաշվի առնելով մաս Հանձնաժողովի գործունեության արդյունքում արձանագրված խնդիրները՝ կարևոր է մաս դրա ինստիտուցիոնալ բարեփոխման խնդրի դիտարկումը: Որպես երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի այս օղակի բարեփոխում՝ կարող են դիտարկվել հետևյալ տարբերակները՝

* **Վերացնել Հանձնաժողովները** - այս տարբերակի թերությունն այն է, որ Հանձնաժողովի վերացման դեպքում վերջինիս ողջ ծանրաբեռնվածությունը բաժին է ընկնելու տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք առանց այդ էլ խնամակալության և հոգաբարձության ոլորտում իրենց պարտականություններին վերաբերում են որպես լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Ըստ այդմ, այս պարագայում ևս հարցականի տակ կարող է դրվել երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ձեռնարկման պատշաճ որակի ապահովումը:

* **Վերացնել Հանձնաժողովները** և վերջիններիս վերապահված գործառնությունները պատվիրակել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ըստ այդմ, Նախարարության կազմում ստեղծելով խնամակալության և հոգաբարձության հարցերով առանձնացված ստորաբաժանում և դրա տարածքային բաժինները: Սա համահունչ է մաս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով¹⁵ (Հավելվածի 1-ին կետ) վերապահված առանձին ոլորտների համակարգման գաղափարին, որի համաձայն՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Նշվածի արդյունքում հնարավոր կլինի ապահովել մաս պատշաճ վերահսկողության իրականացումը:

* **Նախատեսել Հանձնաժողովների գործունեության համար բավարար նյութական և ֆինանսական միջոցներ** - այս ամենը պետք է ընդգրկի ինչպես Հանձնաժողովի անդամներին տրամադրվող լրացուցիչ վարձատրությունը, այնպես էլ որոշակի ֆինանսական հատկացումներ հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովման համար: Արդյունքում՝ հնարավոր կլինի ապահովել Հանձնաժողովի անդամների մոտիվացիան՝ իրենց վերապահված պարտականությունները պատշաճ կատարելու համար, և ըստ այդմ՝ կբարձրանա մաս երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների որակը:

* **Հանձնաժողովի կազմում ապահովել առավելագույն ներկայացվածություն մասնավոր հատվածից (Հասարակական կազմակերպություններ)** - այսպես, ներկայումս Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես մաս հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ) (Որոշման 14-րդ կետ): Անհրաժեշտ է ըստ այդմ դիտարկել մասնավոր հատվածի առավել ներգրավվածության ապահովման հարցը, որպեսզի Հանձնաժողովի անդամները հնարավորություն ունենան առաջնահերթորեն կատարել, որպես հանձնաժողովի անդամ, իրենց առաջադրվող գործառնությունները: Այս տեսանկյունից կարելի է առավել արդյունավետորեն օգտագործել մաս քաղաքացիական հասարակության կամ ոլորտում երկար տարիների գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներուժը:

- ¹ Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:
- ² Ընդունվել է 28.12.2012թ.: Ուժի մեջ է մտել 07.01.2013թ.: ՀՀՊՏ 2012.12.28/66(940).1 Հոդ.1422.11-րդ:
- ³ Ընդունվել է 09.11.2004թ.: Ուժի մեջ է մտել 19.04.2005թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60-րդ:
- ⁴ Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է <http://www.ombuds.am/images/Final.pdf> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ⁵ Տե՛ս, Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, Երևան 2015, հասանելի է՝ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ⁶ Ընդունվել է 02.06.2016թ.: Ուժի մեջ է մտել 09.07.2016թ.: ՀՀՊՏ 2016.06.29/50(1230) Հոդ.603-րդ:
- ⁷ Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է <http://www.ombuds.am/images/Final.pdf> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ⁸ Տե՛ս, Guardianship systems for children deprived of parental care in the European Union, հասանելի է <http://fra.europa.eu/en/publication/2015/guardianship-children-deprived-parental-care> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ⁹ Տե՛ս, <https://www.government.nl/topics/family-law/question-and-answer/how-do-i-become-a-child%E2%80%99s-guardian>
- ¹⁰ Տե՛ս, Guardianship systems for children deprived of parental care in the European Union, հասանելի է <http://fra.europa.eu/en/publication/2015/guardianship-children-deprived-parental-care> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ¹¹ Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է <http://www.ombuds.am/images/Final.pdf> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ¹² Տե՛ս, <https://justitie.belgium.be/sites/default/files/downloads/Mena-EN.pdf> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ¹³ Տե՛ս, Guardianship systems for children deprived of parental care in the European Union, հասանելի է <http://fra.europa.eu/en/publication/2015/guardianship-children-deprived-parental-care> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:
- ¹⁴ Տե՛ս, նույն տեղում:
- ¹⁵ Ընդունվել է 23.03.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: ՀՀՊՏ 2018.03.30/25(1383) Հոդ.446-րդ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:
2. ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1295 որոշում: Ընդունվել է 28.12.2012թ.: Ուժի մեջ է մտել 07.01.2013թ.: ՀՀՊՏ 2012.12.28/66(940).1 Հոդ.1422.11-րդ:
3. ՀՀ ընտանեկան օրենսգիրք: Ընդունվել է 09.11.2004թ.: Ուժի մեջ է մտել 19.04.2005թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4(376) Հոդ.60-րդ:
4. Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը:
5. Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, Երևան 2015:
6. ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշում: Ընդունվել է 02.06.2016թ.: Ուժի մեջ է մտել 09.07.2016թ.: ՀՀՊՏ 2016.06.29/50(1230) Հոդ.603-րդ:
7. Guardianship systems for children deprived of parental care in the European Union:
8. <https://www.government.nl/topics/family-law/question-and-answer/how-do-i-become-a-child%E2%80%99s-guardian>
9. <https://justitie.belgium.be/sites/default/files/downloads/Mena-EN.pdf> հղումով՝ 17.01.2019թ. դրությամբ:

Сурен Крмоян
Кандидат юридических наук

Шушаник Гукасян
Заместитель начальника отдела по разработке антикоррупционной и
уголовно-исполнительной политики Министерства юстиции Республики Армения,
аспирант кафедры гражданского права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Некоторые вопросы касающиеся деятельности опекунских комитетов

В статье проанализирована институциональная структура комитетов по опеке, представлены вопросы их эффективности и возможные варианты институциональных структурных реформ.

Ключевые слова: опека, комитеты, права ребенка.

Suren Krmoyan
Candidate of Legal Sciences

Shushanik Ghukasyan
Deputy Head of Department for Drafting Anti-Corruption and Penitentiary
Policies of the Ministry of Justice of the Republic of Armenia
PhD Student of Civil Law Chair of YSU Faculty of Law

SUMMARY

Certain issues regarding the activity of guardianship committees

The article analyzed the institutional structure of guardianship committees, their effectiveness issues, possible options of institutional structural reforms were presented.

Key words: guardianship, committees, child rights.

Բնագիրը ներկայացվել է 23.01.2019թ.

Ընդունվել է տպագրության 22.03.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Վ. Քոչարյանը

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
ՀՀ ԱՆ վերահսկողական ծառայության երրորդ բաժնի պետ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՋԱՆԳՎԱԾԻ ՆԿԱՏՄԱՍԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ՈՐՊԵՍ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔ. ՓՈՐԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գիտական հոդվածի սահմաններում քննարկման առարկա է դարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասը, մասնավորապես նշված հոդվածում առկա «վեճ» եզրույթի ընկալումը և գնահատումը: Ուսումնասիրությունների արդյունքում անդրադարձ է կատարվել նաև վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասի պահանջի հստակեցման հիմնահարցին:

Հիմնարար-ժառանգական իրավահարաբերություն, ժառանգական գույք, նոտարական գործողություն, սեփականության իրավունքի վերաբերյալ վեճ:

Նոտարական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 1246-րդ հոդվածի 3-րդ մասը որպես նոտարական գործողության կատարման կասեցման հիմք կիրառվում է ոչ միակերպ՝ ներառյալ կապված վերոհիշյալ հոդվածում առկա «վեճ» եզրույթի ընկալման և գնահատման հետ: Այսպես, օրինակ՝ նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը վերոհիշյալ հիմքով կասեցվել էր՝ հիմք ընդունելով այն փաստը, որ դատարանում քննվում է քաղաքացիական գործ, որով այլ ժառանգները դիմել էին ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողելու պատճառները հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով, և բացակայում էր դատարանի որոշումը՝ նոտարական գործողության կատարումն արգելելու մասին, կամ նոտարը կասեցրել էր ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը՝ հիմք ընդունելով միայն հայցադիմումը դատարան մուտք անելու հանգամանքը:

Խնդրի ուսումնասիրության կարևորությունը կայանում է նրանում, որ նշված կասեցումը ոչ ճիշտ կիրառելու պարագայում, առաջանում է նոտարա-

կան գործողության համար դիմած անձի՝ ժառանգի իրավունքների իրականացման սահմանափակում, որի հետևանք անմիջականորեն կարող է հանդես գալ սեփականության սահմանադրական իրավունքի խախտումը:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ վեճի դեպքում ժառանգության իրավունքի վկայագրի հանձնումը կասեցվում է մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Սույն դեպքում «ժառանգության իրավունքի վկայագրի հանձնում» արտահայտությունը ենթադրում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված նոտարական գործողության կատարում, այն է՝ նոտարը տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր: Նշվածից հետևում է, որ ժառանգության իրավունքի վկայագրի հանձնման կասեցնելն իր հերթին հանդես է գալիս որպես նոտարական գործողության կատարման կասեցման հիմք:

Ժառանգության իրավունքի վկայագիրը չստանալը զրկում է ժառանգին ժառանգության ըն-

դունման ուժով այնպիսի գործողությունների կատարման հնարավորությունից, ինչպիսիք են՝ ժառանգական գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը (ելնելով գույքի բնույթից) կամ հավաստումը, ինչն իր հերթին արգելք կարող է հանդիսանալ ժառանգի՝ որպես սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավաբանական գործողությունների կատարմանը (օրինակ՝ գույքն օտարելը, վարձակալության հանձնելը և այլն):

Հետևաբար, անհրաժեշտ է հստակ պատկերացնել այն պայմանները, որոնց առկայությունը բավարար է Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով նոտարական գործողության կատարումը կասեցնելու համար:

Քննարկվող հիմքով նոտարական գործողության կատարման կասեցման առնչությամբ էական է «վեճ» հասկացության ծավալների և բովանդակության բացահայտումը, որոնք հանգում են հետևյալին.

«Վեճ» բառը լեզվական առումով բնորոշվում է որպես հակառակություն, կարծիքների տարբերությունից ծագած վիճաբանություն, տարաձայնություն և այլն¹: Հետևաբար, տարրական մոտեցմամբ կարելի է դիտարկել, որ, եթե որևէ մեկը հայտարարում է ժառանգական գույքի նկատմամբ իր կամ այլ անձի իրավունքի մասին, որը չի համընկնում ժառանգատուի անձի հետ, առկա է տարաձայնություն, այսինքն՝ վեճ, որի հիման վրա միայն ժառանգի իրավունքի իրականացման սահմանափակումն անթույլատրելի է, քանի որ անձի կողմից իր իրավունքի իրականացումը կախման մեջ է դրվում կամայական և ժամկետային որևէ սահմանափակում չենթադրող գործողությունից, ինչն իր հերթին կհանգեցնի ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքի խախտմանը:

Վերոգրյալի արդյունքում քննարկվող նորմում «վեճ» եզրույթը պետք է մեկնաբանվի նորմի ընդհանուր կոնտեքստում՝ հիմք ընդունելով «կասեցվում է մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը» պայմանի սահմանումը, որն, ըստ էության, պետք է գնահատել որպես վեճի՝ հետևաբար նաև կասեցման ավարտի պահի սահմանում, ինչն իր հերթին հնարավորություն է ընձեռում որոշելու նաև վեճի սկիզբը՝ այն բնորոշելով որպես դատական կարգով քննվող իրավունքի վերաբերյալ վեճ:

Նշվածի առնչությամբ իր հերթին առաջանում է մեկ այլ հանգամանքի գնահատման անհրաժեշտություն. որ պահից համարել վեճն առկա, արդյո՞ք դատարան հայցադիմում ներկայացված լինել

ինքնին բավարար է դատական վեճի առկայությունը փաստելու և դրա արդյունքում նոտարական գործողության կատարումը կասեցնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն² անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի՝ «սահմանված կարգով հայց հարուցել» դրույթի մեկնաբանությանը՝ եզրահանգել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար անհրաժեշտ է սահմանված կարգով (օրենքով սահմանված կարգով) հայցը հարուցած լինելու հանգամանքի առկայությունը, այսինքն՝ երբ հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջներին համապատասխան և ընդունվել է դատարանի կողմից:

ՀՀ Սահմանադրական դատարանը³ պաշտպանել է նշված դիրքորոշումը՝ սահմանելով, որ սահմանված կարգով հայց հարուցելը փաստվում է հայցադիմումն ընդունելու մասին դատարանի կայացրած որոշմամբ, և եթե դատարանը կայացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, որը չի բողոքարկվել կամ բողոքարկվել է, սակայն չի վերացվել և ուժի մեջ է մտել, ապա դատավարական տեսանկյունից նշանակում է, որ սահմանված կարգով հայց չի հարուցվել:

Նշված հանգամանքն իր հերթին ենթադրում է, որ սահմանված կարգով հայց հարուցված չլինելու պարագայում, նոտարական գործողության կատարումը կասեցնելու դեպքում իրավական որոշակիության տեսանկյունից, չի կարող կանխորոշվել նաև կասեցման ավարտը, որը Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն որոշված է դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահով, այսինքն՝ չի կարող ակնկալվել դատական ակտ, եթե առկա չէ սահմանված կարգով հարուցված հայց՝ հետևաբար նաև դատական վեճ:

Բացի այդ, հայցադիմումը դատարան ներկայացնելը՝ անկախ դրա հետագա գործընթացի արդյունավետությունից, որպես գործողություն կարող է կատարվել բազմաթիվ անգամներ, ինչը ենթադրում է, որ միայն նշված գործողության հիման վրա նոտարական գործողության կասեցումը կհանգեցնի իրավունքի չարաշահման:

Կարծում ենք, նշված տրամաբանությունից է բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որը պատասխանողի կողմից իրականացվելիք հիմնական գործողությունը, այն է՝ հայցադիմումի պատասխան ներկայացնելը, կոնկրետ ժամկե-

տում, պայմանավորվել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու հանգամանքով:

Քննարկվող նորմի կիրառման համար անհրաժեշտ երկրորդ պայմանը՝ **վեճի բովանդակության** պատշաճ գնահատումն է նոտարի կողմից:

Մասնավորապես՝ ժառանգական իրավահարաբերության վերաբերյալ ցանկացած վեճի առկայությունը դեռևս բավարար չէ Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման համար, և տվյալ նորմի տեսանկյունից էական նշանակություն է տրված միայն ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ վեճին, որի պարագայում խնդիր է դրված պաշտպանել քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների սեփականության իրավունքը և կանխել դրա հնարավոր խախտումը՝ այլ անձի սեփականության նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագրի տրման միջոցով:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ վեճը չունի նշված բովանդակությունը, սակայն կապված է ժառանգական իրավահարաբերության հետ, օրինակ՝ ժառանգների շրջանակի որոշումը ժառանգության ընդունման ժամկետի բաց թողումը հարգելի համարելու միջոցով, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին և այլն, չի կարող առաջացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հետևանքը, և վիճարկող անձը կարող է օգտվել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով վերապահված այլ հնարավորություններից, մասնավորապես՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, այն է՝ որպես շահագրգիռ անձ գրավոր հիմնավորված դիմում ներկայացնել նոտարին և հայտնել իր մտադրությունը, դատարանում նոտարական գործողություն կատարելու անձի իրավունքը վիճարկելու վերաբերյալ, ինչն իր հերթին հիմք է հանդիսանում նոտարական գործողության կատարումը 10 օր ժամկետով հետաձգելու համար՝ հնարավորություն ընձեռելով նոտարին՝ ներկայացնել դատական որոշում նոտարական գործողության կատարումն արգելելու վերաբերյալ:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով կասեցված նոտարական գործողության կատարումը վերսկսելու ժամկետին, հարկ է նկատի ունենալ հետևյալ իրավիճակների սահմանազատումը.

- քննարկվող հոդվածով սահմանված «կասեցվում է մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ

մտնելը» ձևակերպումը գործում է միայն այն դեպքում, եթե խոսքը վերաբերում է վարույթ ընդունված քաղաքացիական գործի լիարժեք քննությանը՝ եզրափակիչ դատական ակտի կայացմամբ, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է որպես վճիռ: Գտնում ենք, որ սույն նորմի տառացի մեկնաբանությամբ ծավալը չի համապատասխանում նորմի իրական բովանդակությանը, որն ավելի լայն է, հետևաբար առկա է տարածական մեկնաբանություն կատարելու անհրաժեշտություն:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտեր են՝

1) առաջին ատյանի դատարանի կայացրած՝ ա. վճիռը և օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը,

բ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումները:

Այսինքն, վեճը համարվում է վերացված, հետևաբար կասեցված նոտարական գործողությունը ենթակա է կատարման նաև օրինական ուժի մեջ մտած գործի վարույթը կարճելու և հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումներ կայացված լինելու դեպքերում:

Արդյունքում գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքի պահպանման և նոտարական գործողության կատարման համար դիմած անձի իրավունքների իրականացման ապահովման տեսանկյունից ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրման կասեցումը Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով կարող է կատարվել միայն նոտարին ժառանգական զանգվածում ներառված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ վեճը դատարանի կողմից վարույթ ընդունելը հավաստող որոշումը ներկայացնելու դեպքում և ենթակա է վերսկսման՝ համապատասխանաբար դատարանի կողմից ոչ միայն վճիռ կայացնելու, այլև գործի վարույթը կարճելու և հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումներն օրինական ուժի մեջ մտնելու պարագայում:

Միաժամանակ, կարծում ենք, որ ցանկալի կլինի հստակեցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1246-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ բացառելու համար մեկնաբանման անհրաժեշտությունը:

¹ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» - Հայկական ՍՍՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1980:

² ՀՀ վճռաբեկ դատարանի 2015թ. հուլիսի 17-ի թիվ ԵԿԴ/0526/02/13 որոշում - <https://www.arlis.am>

³ ՀՀ Սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 19-ի թիվ ՍԴՈ-1265 որոշում - <https://www.arlis.am>

Микаел Минасян

Преподаватель кафедры международного и европейского права института права и политики Российско-Армянского (Славянского) университета, кандидат юридических наук

Даниел Мхсян

Преподаватель кафедры гражданского права Французского университета Армении, начальник 3-го отдела надзорной службы МЮ РА

РЕЗЮМЕ

Спор о праве собственности наследственной массы, как основание приостановления исполнения нотариальных действий.

Анализ практики

В рамках данной научной статьи предметом обсуждения стала третья часть 1246 статьи Гражданского кодекса РА, в частности, восприятие и оценка термина «спор» в упомянутой статье. В результате исследования был также рассмотрен вопрос прояснения требования 3-ей части вышеупомянутой статьи

Ключевые слова: наследственные правоотношения, наследственное имущество, нотариальные действия, спор о праве собственности.

Mickael Miansyan

Professor at the Department of International and European Law at the Institute of Law and Politics of the Russian-Armenian (Slavonic) University, PhD in Law

Daniel Mkheyanyan

Professor at the Department of Civil Law at the French University of Armenia, Head of the third division of Surveillance Service of the Ministry of Justice of Armenia

SUMMARY

The dispute in relation to right of ownership of the hereditary property as a ground for averting acts of notarius.

The analysis of the practice

Article 1246 part 3-th of the Civil Code of Armenia will be discussed in the scope of the present scientific article, particularly the concept of “dispute” with its comprehension and evaluation. The issue of the concretization of the requirement of the abovementioned article’s part 3-th was also reflected in the Process of research and study, for the exclusion of the necessity of interpretation.

Key words: Hereditary legal relations, hereditary property, acts of notaries, dispute in relation to right to property ownership.

Բնագիրը ներկայացվել է 19.03.2019թ.

Ընդունվել է տպագրության 22.03.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ասատրյանը

ԱՐՓԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության
ամբիոնի հայցորդ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հոդվածում ներկայացվում են տեղական ինքնակառավարման առաջացման հիմքերը, տարբեր հեղինակների կողմից տեղական ինքնակառավարման վերաբերյալ գիտական մոտեցումները:

Լինելով ինքնակառավարվող ինքնուրույն համակարգ՝ տեղական ինքնակառավարումը նպատակաուղղված գործունեություն է տեղական նշանակության հանրային հարցերն ինքնուրույնաբար լուծելու և համայնքային ծառայություններ մատուցելու համար:

Հիմնաբառեր- տեղական կառավարում, տեղական ինքնակառավարում, տեղական ինքնակառավարման մարմիններ (այսուհետև՝ ՏԻՄ), համայնքային գործեր:

Տեղական ինքնակառավարումը, որպես սոցիալական երևույթ, պետական կառավարման համակարգում ինքնուրույն իշխանություն իրականացնող ինստիտուտ, մինչև սահմանադրական կարգավորման ենթարկվելը, ձևավորվել և զարգացել է պատմական էվոլյուցիայի և քաղաքակրթության զարգացման արդյունքում:

Նախորդելով պետական իշխանությանը՝ համայնքային ինքնակառավարումը՝ ինքնավարության տարբեր դրսևորումներով, առաջացել և զարգացել է դեռևս հին ժամանակներում, այնուհետև՝ ինքնուրույնության այս կամ այն աստիճանով գոյատևել է պետության ու հասարակության զարգացման բոլոր փուլերում, իսկ արդեն վերջին շրջանում վերածվել է քաղաքական համակարգի կայուն տարրի¹:

Տեղական ինքնակառավարումը, որպես կառավարման ձև, գոյություն է ունեցել դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանում: Ավանդաբար, «տեղական կառավարում» տերմինը նախկինում կիրառվել է մունիցիպալ անվամբ, որը բացատրվում է հետևյալ կերպ՝ (լատիներեն munis – ծանրություն, բեռ, capio – ստանձնել, ընդունել), պետական իշխանության թույլտվությամբ, քաղաքային և գյուղական բնակավայրերի կողմից սոցիալական խնդիրների և տեղական նշանակության հարցերի լուծման իրավունքի ստանձնում²:

Հին Հռոմում «municipium» (հոգնակի՝ municipia) եզրույթով էին անվանում այն քաղաքները և բնակավայրերը, որոնց ազատ բնակչությունը լրիվ կամ սահմանափակ ծավալով ստանում էր հռոմեական քաղաքացիություն և ինքնակառա-

վարման իրավունքներ: Փաստորեն, լեզվական ստուգաբանությամբ «municipium»-ը մի յուրօրինակ հասարակական դաշինք է մունիցիպների՝ պարտապանների կամ համայնքի քաղաքացիների միջև: Այդ պարտականությունները կամ՝ «munera»-ն այն համայնքային պարտավորություններն են, որոնք ստանձնել էին համայնքի բնակիչներն իրենց տրամադրված արտոնությունների և քաղաքացիության պահպանման դիմաց: Հռոմեական Հանրապետության ժամանակաշրջանում Հռոմ քաղաք-պետության մեջ այլ համայնքների՝ գործնական նկատառումներով պայմանավորված միավորման գործընթացը ստիպեց հռոմեացիներին մշակել «municipium»-ի հայեցակարգը, այն է՝ առանձին պետություններ Հռոմի գերակայության՝ իրավագործության ներքո: Այդ պահից սկսած «municipium»-ը գործածվում է այն նույն իմաստով, ինչ ցայսօր՝ համայնք, իշխանության ստորին օղակ, տեղական ինքնակառավարման մակարդակ, իսկ «municipium»-ի բնութագրիչ առանձնահատկությունը տեղական ինքնակառավարումն էր:

Տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեսական գաղափարները բազմիցս հիշատակվում են գիտնականների աշխատություններում և տարբեր կերպ են մեկնաբանվում՝ հենվելով իշխանության բաժանման և ժողովրդավարական սկզբունքների, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման միասնության ու փոխկապակցվածության, ընտրությունների անցկացման, գործունեության կազմակերպման և այլ չափանիշների վրա:

Ներկայացնենք տեղական ինքնակառավար-

ման վերաբերյալ գիտնականների դիտարկումները: Այսպես, ըստ Վ. Ա. Բարանչիկովի՝ «Տեղական ինքնակառավարումը կազմակերպչական ապակենտրոնացված ձև է, տարածքային պետական մարմին, որը ապահովվում է օրենքների և այլ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով»³: Է. Շուգրինը ընդգծում է. «Լինելով պետական իշխանության տարր՝ տեղական իշխանությանը բնորոշ է հանրային իշխանությանը հատուկ առանձնահատկությունները, որն էլ թույլ է տալիս հաշվի առնել իշխանությունը որպես հանրային իշխանության մի տեսակ»⁴: Ըստ Օ. Կուտաֆինի և Վ. Ֆադեևի՝ «Տեղական ինքնակառավարումը, իհարկե, պետության մեջ պետություն չէ: Բայց դրա հետ մեկտեղ, տեղական ինքնակառավարումը չի կարող բացարձակապես պատկանել քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, քանի որ տեղական ինքնակառավարումը լոկ տեղական հարցերի լուծման համար բնակչության ինքնակազմակերպման ձև է: Համայնքային իշխանությունը և պետական իշխանությունը ժողովրդի իշխանության ձևեր են»⁵: Վ. Ֆադեևը տալիս է տեղական ինքնակառավարման իր սահմանումը. «Տեղական ինքնակառավարումը քաղաքացիների գործունեության և կազմակերպման համակարգ է, որն ապահովում է բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի ինքնուրույն (սեփական պատասխանատվությամբ) լուծումը, համայնքային սեփականության կառավարումը՝ ելնելով տվյալ տարածքի բոլոր բնակիչների շահերից»⁶: Ա. Ռ. Վորոնինը, Վ. Ա. Լապինն ու Ա. Ռ. Շիրոկովը գտնում են, որ. «Պետական իշխանությունը ոչ միայն թույլ է տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին հասարակական գործերի մի մասը ինքնուրույն կատարել, այլև պարտավորեցնում է նրանց կատարել իրենց գործառնությունները, միաժամանակ, որպես կանոն, ամրնդիատ շփումներ ստեղծել իշխանության հետ»⁷: Հետաքրքիր է Վ. Վասիլևի դիտարկումը, ըստ որի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինը մի հաստատություն է, որտեղ հասարակությունը հանդիպում է պետությանը և հասարակության մեջ նկատելի է պետության «ընկղման» չափը, իսկ այդ հասարակության «վերելքի» միջոցը անհրաժեշտ կոնկրետ պայմաններ ստեղծելն է»⁸: Մեկ այլ դիտարկմամբ՝ «Տեղական ինքնակառավարման էությունը տեղի քաղաքացու այնպիսի իրավունքի ճանաչումն է, որով վերջինս կլինի իշխանության աղբյուր, առօրյա հարցերում ինքնուրույն որոշումներ կընդունի և ինքն էլ պա-

տասխանատվություն կկրի դրանց հետևանքների համար»⁹:

Հայրենական գրականության մեջ ևս տարբեր կերպ է մեկնաբանվում տեղական ինքնակառավարում հասկացությունը: Այսպես, Ն. Ապիյանը նշում է. «Բոլոր մարդկանց, որոնք ընդգրկված են համապատասխան հանրության կամ խմբի մեջ, ինքնակառավարման հիման վրա հնարավորություն է տրվում մասնակցելու ընդհանուր գործերի լուծմանը՝ անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով»¹⁰: Ըստ Հ. Մ. Խաչատրյանի՝ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետության քաղաքների, գյուղերի բնակչության, քաղաքացիների ինքնակառավարումն է: Նրանց կառավարում է ոչ թե ինչ-որ մեկը վերևից, այլ իրենք են կառավարում իրենց տեղական գործերը»¹¹:

Տեսական գրականության մեջ ենթադրվում է, որ տեղական ինքնակառավարման կազմակերպման գաղափարները առաջին անգամ ներկայացրել է ֆրանսիացի քաղաքական գործիչ Տուրեն 1790թ.-ին: Նա առաջինն էր, ով ձևակերպեց այնպիսի հիմնական հասկացություններ, ինչպիսիք են.

1. «պետական գործեր», որոնք պետության կողմից փոխանցվում են տեղական ինքնակառավարման մարմիններին,
2. «համայնքային գործեր», որոնք իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները»¹²:

Մասնագիտական գրականության մեջ «տեղական կառավարում» և «տեղական ինքնակառավարում» հասկացությունները տարբեր կերպ են մեկնաբանվում, չնայած այս հասկացությունները երբեմն նույնընկալման է բերում: Որոշ հեղինակների կարծիքով՝ տեղական կառավարումը կարող է իր մեջ ներառել ինչպես պետական իշխանության կազմակերպումը տեղերում, այնպես էլ՝ բնակչության ընտրած մարմինները¹³, այսինքն՝ տեղական ինքնակառավարումը տեղական կառավարման բաղկացուցիչ մաս է: Տեղական կառավարում ասելով՝ նրանք հասկանում են կառավարչական գործունեություն տարածքային միավորներում, որն իրականացվում է կենտրոնական իշխանության կողմից, իսկ տեղական ինքնակառավարումը բնութագրում են որպես տարածքային միավորների բնակչության գործունեություն, այսինքն՝ տարածքի բնակչության և նրա ընտրած մարմինների գործունեությունը՝ լուծելու տեղական նշանակության

հարցերը:

Տեղական ինքնակառավարումը, որպես կառավարման տեսակ, առաջացել է Անգլիայում (self-government) 17-րդ դարում՝ անգլիական հեղափոխությունից հետո, սակայն մեծ թվով երկրներում այն առաջացել է 19-րդ դարի կեսերին, իսկ հետագայում «տեղական ինքնակառավարում» տերմինը փոխանցվեց Եվրոպա¹⁴:

Տեսականորեն տեղական ինքնակառավարման հայեցակարգը առաջ է քաշել ֆրանսիացի քաղաքական գործիչ, պատմաբան, գրականագետ Ալեքսիս դե Տոկվիլը, որի հենքի վրա գերմանական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչները հետագայում մշակեցին տեղական ինքնակառավարման այլ հայեցակարգեր: Ալեքսիս դե Տոկվիլը, բարձր գնահատելով համայնքային ազատությունները, իր՝ «Ժողովրդավարությունն Ամերիկայում» երկհատորյա գրքում գրել է. «Համայնքային հաստատությունները անկախության կայացման համար խաղում են այն դերը, ինչ հանրակրթական դպրոցները գիտության մեջ. նրանք մարդկանց համար բացում են ճանապարհ դեպի ազատություն և սովորեցնում օգտվել այդ ազատությունից»¹⁵:

Պարզ է, որ տեղական ինքնակառավարման էության առնչությամբ գիտական բանավեճերը շարունակվել են շուրջ երկու դար, ինչի արդյունքում՝ տեղական ինքնակառավարման վերաբերյալ ձևավորվել են բազմաթիվ հայեցակարգային մոտեցումներ, որոնք հետագայում էական նշանակություն են ունեցել տեղական ինքնակառավարման տեսությունների և այժմ գործող համակարգերի համար:

Ընդհանրացնելով տեղական ինքնակառավարման վերաբերյալ գիտական մոտեցումները՝ գալիս ենք մի պարզ հետևության. անտիկ շրջանում, երբ գոյություն չեն ունեցել պետությունները՝ մեկ այլ վարչական միավորի տեսքով են հանդես եկել՝ որպես քաղաք-պետություններ: Ուստի, կարելի է եզրակացնել, որ տեղական կառավարումն իր բուն իմաստով ավելի վաղ է գործել, քան պետական կառավարումը: Նման պարագայում անգամ անտիկ շրջանում քաղաք-պոլիսներին վերաբերող հարցերը բարձրացրել և լուծել են միայն այդ քաղաք-պոլիսի բնակիչները, ինչն, անշուշտ, վկայում է ոչ միայն քաղաքացիության՝ որպես անձի իրավաբաղադրական կարգավիճակին վերաբերող, այլև քաղաք-պոլիսի բնակիչ լինելու և տեղական մակարդակով քաղաքային նշանակության հարցերը լուծելու իրավունքին առնչվող հատկանիշների մա-

սին:

Գիտական ուսումնասիրությունների արդյունքում, մեր դիտարկմամբ, տեղական ինքնակառավարումը՝

ա) ժողովրդավարական երկրներում, կախված կառավարման և կառուցվածքային տարրերից, անհրաժեշտ է զուգակցել պետական կառավարման հետ,

բ) որպես ժողովրդաիշխանության իրականացման ձև, անհրաժեշտ է օրենսդրական կարգավորմամբ ապահովել համայնքի բնակչության առջև հաշվետվողականությունը և պատասխանատվությունը,

գ) ապահովել անմիջական մասնակցություն ընտրովի համակարգով,

դ) դիտարկելով որպես ինքնուրույն կառավարման տեսակ՝ օրենսդրական կարգավորմամբ ապահովել համակարգի ֆինանսական, տնտեսական, կադրային և այլ համայնքային նշանակության ոլորտների քաղաքականության մշակումը և վարումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք շարադրել տեղական ինքնակառավարման վերաբերյալ հետևյալ ձևակերպումը. «Տեղական ինքնակառավարումը գործունեության կազմակերպման ձև է, կառավարման ինքնուրույն տեսակ, որն ուղղված է համայնքային նշանակության հարցերի լուծմանը, համայնքային ծառայությունների մատուցմանը՝ ելնելով համայնքի բնակչության սովորույթներից ու ավանդույթներից»:

Այսպիսով, պետության կողմից տեղական ինքնակառավարման ինստիտուտի ընդունումը որպես սահմանադրական կարգի հիմունք, ժողովրդաիշխանության իրացման ձև և տեղական նշանակության հարցերի լուծման իրավունք, պետք է անարգել իրականացվի, քանզի ժողովրդավարական արժեքներ կրող և ժողովրդավարական ուղին որդեգրած ցանկացած երկիր, հանրային իշխանության համակարգում, տեղական ինքնակառավարումը չպետք է երկրորդային դիտարկի ու այդ ուղղությամբ մշտապես պլանավորված և կառուցողական քաղաքականություն իրականացնի՝ ի ապացույց ժողովրդավարական արժեքներ կրող իրական երկրի:

- ¹ Տե՛ս, ՀՀ մունիցիպալ իրավունք: Ոստմնական ձեռնարկ, ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի, Եր., 2015, էջ 56:
- ² Տե՛ս, Frank Frost Abbott, Municipal Administration in the Roman Empire (1926), Read Books, 2007, էջ 8:
- ³ Տե՛ս, Баранчиков В.А., Муниципальное право РФ: Учебник, 2000, С. 7-8.
- ⁴ Տե՛ս, Шугрина Е.С., Муниципальное право Российской Федерации: учеб. 2-е изд., перераб. и доп. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2007, С. 30.
- ⁵ Տե՛ս, Кутафин О. Е., Фадеев В. И. Муниципальное право Российской Федерации: изд. Юрист, М., 1997, С. 89. ист, М., 1997, С. 89.
- ⁶ Տե՛ս, Фадеев В. И., Муниципальное право России: изд. Юрист, М., 1994, С. 33.
- ⁷ Տե՛ս, Воронин А.Г., Лапин В.А., Широков А.Н. Основы управления муниципальным хозяйством, М., 1997, С. 13.
- ⁸ Տե՛ս, Васильев В.И. Правовые рамки политических реформ: М., 2005, С. 165-166.
- ⁹ Տե՛ս, Бабун Р. В. Организация местного самоуправления, Питер – 2005, С. 10
- ¹⁰ Տե՛ս, Апян Н. А., Демократия и самоуправление, Республика Армения , 13 октября, 1990, N 5.
- ¹¹ Տե՛ս, Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, էջ 317:
- ¹² Տե՛ս, Օրդյան Է. Հ. Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, 2000, էջ 9:
- ¹³ Տե՛ս, Игнатов В. Г. Государственная власть и местное самоуправление в России. РАН, М., 1998, С. 147.
- ¹⁴ Տե՛ս, Велихов Л.А. Основы городского хозяйства. Общее учение о городе, его управлении, финансах и методах хозяйства. Обнинск, 1995, С. 232.
- ¹⁵ Տե՛ս, Токвиль А. Демократия в Америке, М., 1992, С. 65.

Արփինե Բիշարյան

Соискатель кафедры юриспруденции Европейского университета

РЕЗЮМЕ

*Научные подходы местного самоуправления.**Историко-правовой обзор*

Будучи автономной самоуправляемой системой, местное самоуправление представляет собой целенаправленную деятельность по самостоятельному решению общественных проблем местного значения и предоставлению общинных услуг.

В статье представлены основы возникновения местного самоуправления, научные подходы разных авторов по местному самоуправлению.

Ключевые слова: *местное управление, местное самоуправление, органы местного самоуправления (далее - ОМГ), общественные дела.*

Arpine Bisharyan

Correspondence Degree Seeker at the Chair
of the Law of the European University

SUMMARY

*Scientific approaches of the local self-government.**Historical-legal overview*

Being an autonomous self-governed system, local self-governance is a purposeful activity to self-solve local issues of public significance and to provide community services.

The article presents the bases for the establishment of local self-government, the scientific approaches of different authors about the local self-governance.

Key words: *local government, local self-government, local self-governing bodies (hereinafter LSGB), community affairs.*

Բնագիրը ներկայացվել է 02.11.2018թ.

Ընդունվել է տպագրության 22.03.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ՍԱՐԳԻՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոգվածը նվիրված է սահմանադրական անվտանգության իրավական բովանդակության հիմնահարցերի ու առանձնահատկությունների հետազոտությանը: Օբյեկտիվ հատկանիշներից ելնելով դիտարկվել է «պետական անվտանգություն», «ազգային անվտանգություն» և «սահմանադրական անվտանգություն» հասկացությունների տարանջատումը, վերլուծվել են դրանց առանձին բնութագրիչները, ինչպես նաև ուսումնասիրվել են դրանց առնչվող տեսական-իրավական բնույթի այլ հարցադրումներ:

Հիմնաբառեր- պետական անվտանգություն, սահմանադրական անվտանգություն, ազգային անվտանգություն, ազգային շահ, իրավական բնութագրիչներ:

Պետության անվտանգությունն իր հերթին հանդիսանում է ավելի լայն հասկացության՝ ազգային անվտանգության հիմնական բաղադրիչը, որի տակ նախ և առաջ հասկացվում է տվյալ պետության ժողովրդի՝ որպես անկախության կրողի և իշխանության միակ աղբյուրի, անվտանգությունը:

Իրավագետների շրջանում, «ազգային անվտանգություն» հասկացության և բովանդակության առումով, կան տարակարծություններ: Այսպես, պրոֆեսոր Ա.Վ.Վազգենիկովը գտնում է, որ ազգային անվտանգությունը դա. «...կենսագործունեության բոլոր ոլորտներում անձի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանվածության վիճակն է արտաքին և ներքին վտանգներից ու սպառնալիքներից, երկրի այնպիսի իրավիճակի բնութագրմամբ, որի պայմաններում ապահովվում է դրա ամբողջականությունը և ներքին կայունությունը, անկախ և առաջադեմ զարգացումը, միջազգային իրավահարաբերությունների լիարժեք և ինքնուրույն սուբյեկտ հանդես գալու հնարավորությունը»:

Պրոֆեսոր Ն.Գ. Մատռուսովը ազգային անվտանգությունը դիտարկում է որպես ներքին և արտաքին սպառնալիքներից, ազգային արժեքների և ռեսուրսների, ինչպես նաև պետական, հասարակական և անձնական շահերի, մակարդակով և բնույթով բավարար պաշտպանվածությունը²:

Ավելին, պրոֆեսոր Վ.Ա. Բատյուշենկովը ազգային անվտանգության տակ հասկանում է ազգի, (որպես մարդկանց պետական-տարածքային համայնքի) առաջադեմ զարգացման և արժանապատիվ կյանքի որակի պահպանումը ներքին և արտաքին վտանգներից (սպառնալիքներից)³:

Իսկ պրոֆեսոր Մ.Վ.Ալեքսանդրովը ազգային անվտանգությունը որակում է որպես գործոնների համակցություն, որոնք ապահովում են միջազգային հարաբերությունների համակարգում պետության կենսագործունեությունը, արտաքին վտանգին դիմակայելու և ազգային շահերին համահունչ գործելու ունակությունը:

Մեր կարծիքով, դա արդարացի է և օբյեկտիվ: Միջազգային իրավունքում «ազգ» տերմինն օգտագործվում է «երկիր», «պետություն» բառերի հոմանիշ: Միջազգային համագործակցության համընդհանուր կազմակերպությունը, որի անդամն է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունը այդպես էլ անվանվում է «Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)»: Այս տեսանկյունից ազգային անվտանգությունը նույնացվում է պետական անվտանգության հետ: Միաժամանակ «ազգ» եզրույթն ընկալվում է որպես մարդկանց պատմականորեն առաջացած հանրություն, որը բնորոշվում է լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և մշակույթի մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրությամբ՝ տերություն, ժողովուրդ⁴: Այս տեսանկյունից ներկայացված տերմինները նույնական չեն, ինչպես նաև այն դեպքերում, երբ խոսք է գնում պետական և ազգային շահի մասին: Բնականաբար, խոսքը չի վերաբերում դրանց հակադրմանը, հակառակը, այդ հասկացությունները փոխադարձաբար լրացնում են միմյանց:

Առաջին անգամ, անվտանգություն հասկացության համեմատաբար ամբողջական մեկնաբանությունը տվել է պրոֆեսոր Ս.Ջ. Պավլիենկոն: Մասնավորապես, հեղինակն անվտանգությունը բնութագրում է՝

ա) որպես անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանվածության վիճակ,

բ) որպես վտանգի բացակայության միջոց,

գ) որպես իրավիճակ, որտեղ անվտանգությունը հանդիսանում է տվյալ համակարգի առանձնահատկություն,

դ) որպես պետական մարմինների հատուկ գործունեության տեսակ,

ե) որպես անվտանգային որոշակի պայմաններ⁵:

Միաժամանակ, նույն հեղինակը արդարացիորեն եզրակացնում է, որ արտասահմանյան երկրներում նույնպես դեռևս չեն մշակվել միասնական մոտեցումներ անվտանգության կատեգորիային և դա ակտուալ խնդիր է, քանի որ՝ «չկա հստակ տարանջատում «պետական անվտանգություն, ազգային անվտանգություն, սահմանադրական անվտանգություն սահմանումներում»⁶: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է տարանջատել «պետական անվտանգություն», «ազգային անվտանգություն», «սահմանադրական անվտանգություն» հասկացությունները, որն առաջարկվում է անցկացնել՝ օբյեկտիվ հատկանիշներից ելնելով:

Ինչ վերաբերում է սահմանադրական անվտանգությանը, ապա, մեր կարծիքով, այն հանդիսանում է պետական և ազգային անվտանգության հիմնական մասը: Ընդհանուր առմամբ, պետության սահմանադրական անվտանգություն ասելով պետք է հասկանալ սահմանադրական կարգի պաշտպանվածության վիճակը տարաբնույթ վտանգներից: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ իրավագիտության բնագավառում նշված եզրույթի էության վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ:

Այսպես, օրինակ, պրոֆեսոր Տ.Ե. Շուբերտը սահմանադրական անվտանգություն ասելով հասկանում է. «...սահմանադրական կարգի հիմքերի պաշտպանվածության վիճակն արտաքին և ներքին վտանգներից, որոնց մեջ ներառվում են Սահմանադրության նորմեր, որոնք որոշում են իրավունքի համակարգի նախնական սկիզբը, սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների գործունեության և կարգավիճակի կարևոր սկզբունքները, որոնք թույլ են տալիս որոշել և զարգացնել սահմանադրական օրենսդրության ուղղությունները և ինստիտուտները: Սահմանադրական անվտանգությունն իր մեջ ներառում է անվտանգության հարցերը կարգավորող օրենսդրության որակը, անվտանգության բնագավառի և այն

ապահովող մարմինների համակարգի իրավակիրառության եղանակները»⁷:

Իսկ պրոֆեսոր Ա.Հ. Խաչատրյանն, անդրադառնալով սահմանադրական անվտանգության հիմնախնդրին մարդու իրավունքների ու ազատությունների հարգման և պաշտպանության կապակցությամբ հանրային իշխանության պարտականության իրականացման համատեքստում, նշել է, որ այն պետական անվտանգության մաս չի կազմում, այլ ընդհակառակը՝ դիտարկվում է որպես պետության և հասարակության, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների և պարտականությունների պաշտպանվածության վիճակ⁸:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ՝ եթե *ազգային անվտանգությունը կարելի է բնութագրել* որպես ազգի (որպես մարդկանց պետական-տարածքային համայնքի) առաջադեմ զարգացման և արժանապատիվ կյանքի որակի պաշտպանությունը ներքին և արտաքին վտանգներից (սպառնալիքներից), իսկ *պետական անվտանգությունը*, որպես ներքին և արտաքին վտանգից պետության կենսական կարևոր շահերի պահպանման վիճակ, ապա *սահմանադրական անվտանգությունը*, որպես ներքին և արտաքին վտանգից սահմանադրական կարգի հիմունքների պահպանման վիճակ, որոնք իրենց մեջ ներառում են իրավունքի համակարգի սկզբունքներն ամրագրող Սահմանադրության նորմեր, սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների կարգավիճակի և գործունեության կարևորագույն սկզբունքները, որոնք հնարավորություն են տալիս սահմանել և զարգացնել սահմանադրական օրենսդրության ինստիտուտները և ուղղությունները:

Բացի այդ, սահմանադրական անվտանգությունը ներառում է նաև անվտանգության հարցերը կարգավորող օրենսդրության որակը, անվտանգության ոլորտում իրավակիրառության եղանակները և դրանք ապահովող պետական մարմինների համակարգը: Այստեղից հետևում է, որ սահմանադրական անվտանգությունը և պետական անվտանգությունը հանդիսանում են ընդհանուրի, այն է՝ ազգային անվտանգության մի մասը:

Միաժամանակ, սահմանադրական անվտանգության ապահովման ոլորտում պետության հիմնական խնդիրներն են հանդիսանում օրենսդրության մշակման և ընդունման ընթացքում առաջնահերթության հարցի լուծումը, սահմանադրական օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը սահմանադրական

կարգի հիմքերին, սահմանադրական կարգի հիմքերը զարգացնող և կոնկրետացնող նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ հսկողությունը, դրանց իրացման մեխանիզմների ապահովումը:

Յուրաքանչյուր պետություն ունի իր ազգային շահը, որի տակ նկատի է ունեցվում անձի հավասարակշիռ հետաքրքրությունների համակցություն, հասարակությունը և պետությունը տնտեսական, ներքաղաքական, սոցիալական, միջազգային, տեղեկատվական, զինվորական, սահմանային, բնապահպանական և այլ ոլորտներում: Դրանք կրում են երկարաժամկետ բնույթ և որոշում են հիմնական նպատակները, պետության ներքին և արտաքին քաղաքականության ընթացիկ և ռազմավարական խնդիրները: Յուրաքանչյուր պետություն որոշելով աշխարհում իր տեղը, սեփական ազգային շահերից ելնելով, որոշում է նաև տարբեր պետությունների հետ հարաբերությունների բնույթը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, համամարդկային արժեքների և ժողովրդավարության ինստիտուտների կրող հռչակած պետությունը, ազգային շահն ապահովելու ընթացքում ոչ միշտ է կարողանում պահպանել միջազգային իրավունքի ունիվերսալ նորմերը, որոնցով կարգավորվում են պետությունների փոխհարաբերությունները:

Այս առումով պետության ազգային շահը, հատուկ իրավահարաբերությունների ուժով ունի յուրահատկություն, որն առաջանում է տվյալ պետության գործունեության ընթացքում: Այս դեպքում պետության ազգային անվտանգության օբյեկտն ավելի լայն հասկացություն է: Օբյեկտի դերում ան-

միջականորեն հանդես են գալիս պետությունը և նրա ինստիտուտները՝ քաղաքական և տնտեսական համակարգը, հասարակությունն ամբողջությամբ, պետության տարածքում բնակվող ազգերն ու ազգությունները, առանձին քաղաքացիներ, նրանց սովորույթներն ու սովորությունները, լեզուն, կյանքի դասավորությունը, մշակույթը և հավատքը: Այս առումով պետության ազգային անվտանգության ապահովում նշանակում է սահմանադրական կարգի անձեռնմխելիության, պետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, իրավական տարածքային միասնականության ապահովումը:

Այսպիսով, ընդհանրացնելով կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը. պետության անվտանգությունը՝ որպես քաղաքական կազմակերպության քաղաքական հիմք, անհրաժեշտ է ընկալել որպես ազգային անվտանգության մաս և, միաժամանակ, քաղաքական, տնտեսական, սոցիալական, սահմանադրական և անվտանգության այլ տեսակների համակցություն, որը կոչված է ապահովելու պետության սահմանադրական կարգի անձեռնմխելիությունը, պետության տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունությունը, ինչպես նաև իրավական տարածքի միասնականությունը:

¹ Возжеников А.В. Парадигма национальной безопасности реформирующейся России.-М.,2000. С. 48.

² Матрусов Н.Д. О необходимости создания целостной системы национальной безопасности России: основные принципы, подходы, элементы // Безопасность: Информационный сборник. 1996. N3-4. С. 20.

³ Батюшенков В.А. Конституционная ответственность в сфере обеспечения национальной безопасности России: диссертация ... кандидата юридических наук : - М.: 2004. С. 67.

⁴ Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան. Եր.: 1976, էջ 17

⁵ Павленко С.З. Безопасность российского государства как политическая проблема. Дисс. док. наук., М., 1998, С. 94-99.

⁶ Նշվ. աշխ. մեջ, էջ 94-98.

⁷ Шуберт.Т.Э. Национальная безопасность России: конституционно-правовые аспекты: Сравнительно-правовое исследование.-М.: Право и закон. 2001. С. 177.

⁸ Хачатрян А.Г., Конституционная безопасность и вопросы конституционного контроля по защите прав и свобод граждан: закономерности и отклонения, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, Գիտական հոդվածների ժողովածու. - Եր.: 2017. էջ 39:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան. Եր.: 1976, 1115 էջ:
2. Хачатрян А.Г., Конституционная безопасность и вопросы конституционного контроля по защите прав и свобод граждан: закономерности и отклонения, Գիտակրթական միջազգային կենտրոն, ՀՀ ԳԱԱ, Գիտական հոդվածների ժողովածու. - Եր.: 2017. 472 էջ:
3. Батюшенков В.А. Конституционная ответственность в сфере обеспечения национальной безопасности России : диссертация ... кандидата юридических наук: - М.: 2004. 178 стр.
4. Возжеников А.В. Парадигма национальной безопасности реформирующейся России-М.,2000.438 стр.
5. Матрусов Н.Д. О необходимости создания целостной системы национальной безопасности России: основные принципы, подходы, элементы// Безопасность: Информационный сборник. 1996. N3-4. 222 стр.
6. Павленко С.З. Безопасность российского государства как политическая проблема. Дисс. док. наук., М., 1998, 403 стр.
7. Шуберт.Т.Э. Национальная безопасность России: конституционно-правовые аспекты: Сравнительно-правовое исследование.-М.: Право и закон. 2001. 454 стр.

Տարգիս Մնացական
Кандидат юридических наук

PEZIOME

*Теоретическо-юридический анализ вопроса отношений
между государственной и конституционной безопасностью*

Эта статья посвящена исследованию вопросов конституционной безопасности и их особенностям. Исходя из объективных качеств, было рассмотрено разделение между государственной безопасностью и конституционной безопасностью, были анализированы их отдельные качества, а также были изучены другие теоретическо-юридические вопросы касающиеся их.

Ключевые слова: конституционная безопасность, национальная безопасности, правовая безопасность, национальный интерес, правовые характеристики.

Sargis Mnatsakanyan
Candidate of Juridical Sciences

SUMMARY

*Conflict issue of state security and constitutional security
Theoretical - juridical analysis*

This article is devoted to the study of issues and peculiarities of constitutional security legal content. Based on objective attitudes the separation of concepts of state security, national security and constitutional security were reviewed, their specific characteristics were analyzed, as well as other questions of theoretical and legal nature were studied.

Key words: State security, constitutional security, national security, national interest, legal characteristics.

Բնագիրը ներկայացվել է 04.03.2019թ.
Ընդունվել է տպագրության 22.03.2019թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը

ԶԱՐՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մասնագիտական
կրթության և որակի ապահովման բաժնի դասախոս

ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՍ

Հոգվածում առաջին անգամ փորձ է արվել ներկայացնել, որ կոռուպցիան կարող է ունենալ նաև պայմանական ասած «բնական պատճառներ»։ Այն մասով է «բնական», որ մարդը նախևառաջ կենսաբանական էակ է, որի համար համապատասխան իրավիճակում, մասնավորապես՝ պահանջմունքների խիստ անբավարար պայմաններում, կարող է ունենալ կոռուպցիոն վարքագիծ։ Այդ մասով հոգվածում վեր է հանվել նաև այն գաղափարը, որ բնության ստեղծած օրենքները մարդիկ ի գործու չեն փոխել, ուստի առաջարկվել է դրա դեմ իզուր չպայքարել, այլ հակառակը՝ մարդկային օրենքները հարմարեցնել բնության օրենքներին՝ ստեղծելով նրանց միջև հարմոնալիզացիա։

Հիմնաբառեր՝ կոռուպցիա, կոռուպցիայի պատճառ, կոռուպցիոն վարքագիծ, պահանջմունքներ, ֆիզիոլոգիական պահանջմունք, անվտանգության պահանջմունք, սիրո պահանջմունք, ինքնահարգանքի պահանջմունք, ինքնաիրականացման պահանջմունք, պահանջմունքների անբավարարություն։

Մարդը և բնությունը փոխկապված են, քանզի առանց բնության մարդ չի կարող գոյություն ունենալ։ Նա ի սկզբանե կենսաբանական էակ է, իսկ հետագայում դառնալով նաև հասարակական էակ՝ չի կորցնում իր կենսաբանական հատկությունները։ Վերջիններիս վրա է հիմնված մարդու պահանջմունքների առաջացումը։ Գոյատևելու համար մարդուն տրվել են պահանջմունքներ, իսկ պահանջմունքը կարելի է ասել պահանջմունք է մի բանում, ինչն ընկած է օրգանիզմից դուրս¹։

Օրինակ՝ ապրելու համար մարդուն անհրաժեշտ է ջուր, ուստի նրան տրվել է ծարավելու պահանջմունքը։ Եվ այս դեպքում, երբ օրգանիզմից դուրս ընկած է մի առարկա, ինչն անհրաժեշտ է մարդուն ապրելու համար, սակայն այդ առարկան իրեն հասանելի չէ, ապա մարդն իր պահանջմունքը բավարարելու համար կարող է դիմել ամենատարբեր միջոցների, կարծում ենք՝ որոշ դեպքերում նաև կոռուպցիոն վարքագծի։

Այժմ փորձենք դիտարկել, թե ինչպես։ Դրա համար նախևառաջ հասկանանք, թե ինչպես են մարդու պահանջմունքները գործում՝ վերլուծության ենթարկելով ամերիկացի հոգեբան, հումանիտար հոգեբանության հիմնադիր Աբրահամ Մալլուի պահանջմունքների հիերարխիայի բուրգը։

Իր «Մոտիվացիան և անհատը» աշխատության մեջ Մալլուին ենթադրում է, որ մարդու բոլոր պահանջմունքները տրվում են ի ծնե և գոյություն ունի պահանջմունքների կոնկրետ հիերարխիա, որը նա ներկայացրել է հետևյալ ձևով՝

- ֆիզիոլոգիական պահանջմունք,
- անվտանգության պահանջմունք,

- սիրո և պատկանելիության պահանջմունք,
- հարգանքի պահանջմունք,
- ինքնաիրականացման պահանջմունք։

Ֆիզիոլոգիական պահանջմունքներն, այսպես ասած, անձի հիմնական պահանջմունքներն են, որի մեջ մտնում են խմելու, քնելու, սնվելու, ինչպես նաև այլ կենսաբանական պահանջմունքները։

Բնական է, որ առանց այդ պահանջմունքների բավարարման մարդը չի կարող գոյություն ունենալ, որի համար Մալլուին մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքները դնում է պահանջմունքների բուրգի հիմքում²։ Անվտանգության պահանջմունքը ներառում է անձի անվտանգ, կայուն և պաշտպանված, վախի զգացողությունից զերծ լինելու պահանջմունքը։ Մարդիկ, ովքեր ապրում են խաղաղ, կայուն հասարակությունում, կարող են չվախենալ գիշատիչներից, շոգից, ցրտից, սովից, հանցագործներից։ Նորմալ հասարակությունում առողջ մարդկանց մեջ անվտանգության պահանջմունքը դրսևորվում է մեղմ ձևերով։ Նրանց մեջ ցանկություն է առաջանում տեղավորվել մի կազմակերպությունում աշխատանքի, որտեղ իրենց կտրվեն սոցիալական երաշխիքներ կամ փորձում են գումար կուտակել այսպես ասած «սև օրվա» համար³։

Սիրո և պատկանելության պահանջմունքը ներառում է սոցիալական պատկանելության պահանջմունքը, ինչպես նաև սիրելու պահանջմունքը։ Այս կատեգորիայի մեջ կարելի է ներառել այնպիսի հասկացություններ, ինչպիսին ընտանիքն է, ընկերները, շրջապատը, ռեֆերենտային խումբը։

Հարգված լինելու պահանջմունքի վերաբերյալ

Մասլոուն նշում է, որ «յուրաքանչյուր մարդ (բացառությունները մի կողմ) միշտ կարիք է զգում, որ իրեն ընդունեն և իր արժանիքները բարձր գնահատեն»⁴։ Այս պահանջմունքը ներառում է նաև ինքն իրեն հարգելու հնարավորությունը։ Իսկ ինքնահրականացումը (ինքնասակտուալիզացիան) արդեն անձի ունակությունների զարգացումն է։

Այսպես, Մասլոուի պահանջմունքների հիերարխիայի էությունն այն է, որ այստեղ գործում է հերթականություն, այսինքն մինչ առաջին՝ ֆիզիոլոգիական պահանջմունքը քիչ թե շատ չի բավարարվում, ապա չի առաջանում և, այսպես ասած, չի ակտիվանում երկրորդ՝ անվտանգության պահանջմունքը։ Եթե անվտանգության պահանջմունքը, քիչ թե շատ չի բավարարվում, ապա չի առաջանում երրորդ՝ սիրո և պատկանելիության պահանջմունքը։ Եվ նույն տրամաբանական հերթականությամբ շարունակ, մինչ չի բավարարվում անձի երրորդ՝ սիրո և պատկանելիության պահանջմունքը, չի առաջանում չորրորդ՝ հարգված լինելու պահանջմունքը։ Վերջինս մինչ չի բավարարվում, չի առաջանում հինգերորդ՝ ինքնահրականացման պահանջմունքը։

Այսինքն՝ բուրգի ստորին հատվածում գտնվող պահանջմունքը գերիշխող բնույթ ունի վերինների նկատմամբ։

Դիտարկենք այն նախ առօրյա օրինակով։

Աշխատանքից քաղցած տուն մտած ընտանիքի հայրը, որպես կանոն, որքան էլ կարոտած լինի իր երեխաներին, առաջին հերթին դժվար թե սկսի խաղալ, սիրել նրանց (այսինքն՝ տրվել երրորդ սանդղակում գտնվող պահանջմունքի բավարարմանը)։ Որպես կանոն՝ նա առաջինը կմտնի սանհանգույց, իսկ հետո խոհանոց՝ ճաշելու համար (այսինքն՝ կբավարարի առաջին սանդղակում գտնվող պահանջմունքները), որից հետո, երբ վերջիններս զոնե նվազագույն չափով կբավարարվեն, կանցնի արդեն իր երրորդ՝ սիրո պահանջմունքին՝ տվյալ օրինակով՝ երեխաների հետ շփմանը։ Իհարկե, սա այն դեպքում, երբ երկրորդ՝ անվտանգության պահանջմունքը, նույնպես լինի այս կամ այն չափով բավարարված, քանզի ինչպես նշվեց պահանջմունքների հիերարխիայի համաձայն՝ որպեսզի ծագի երրորդ պահանջմունքը, պետք է բավարարված լինեն մինչ այդ առկա պահանջմունքները, այսինքն՝ առաջին և երկրորդ պահանջմունքները։

Ուստի, երրորդ պահանջմունքի ծագման համար՝ այս օրինակում երեխաներին սիրելու, սիրվե-

լու և խաղի տրվելու համար, ֆիզիոլոգիական պահանջմունքները բավարարելուց բացի, պետք է բավարարված լինի նաև անձի երկրորդ՝ անվտանգության պահանջմունքը, այսինքն՝ անձը որոշ չափով պետք է գտնվի անվտանգ իրավիճակում։ Ընդ որում, անվտանգություն ասելով՝ կարող ենք հասկանալ ինչպես ֆիզիկական անվտանգությունը, այնպես էլ հոգեկան անվտանգությունը։ Եթե անձը գտնվի լարված հոգեվիճակում, իրեն հուզի որևէ խնդիր՝ այսինքն գտնվի հոգեկան անկայուն, ոչ անվտանգ վիճակում, ապա նա կրկին չի կարողանա լիարժեքորեն տրվել երեխաների հետ շփմանը։ Ավելին՝ նման դեպքերում կարող է անգամ երեխաների ներկայությունը, ձայնը տվյալ անձի համար լինել նյարդայնացնող։

Իսկ արդեն այն իրավիճակում, երբ անձի ոչ միայն ֆիզիոլոգիական, այլ նաև անվտանգության պահանջմունքը լինի բավարարված, ապա անձը նոր կարող է արդեն լիարժեքորեն տրվել սիրո պահանջմունքի իրականացմանը։

Պատահական չէ այն, որ օրինակը բերեցինք հենց երեխաների մասով, քանի որ երեխաները մեծամասնության համար ամենաառաջնային և ամենակարևոր դերակատարությունն ունեն և չնայած դրան՝ անգամ երեխաների դեպքում այս կանոնը հաճախ գործում է, այսինքն՝ ներքին սանդղակում գտնվող պահանջմունքները հաճախ առաջնային են դառնում, թեկուզ վերին սանդղակում գտնվի մարդու համար ամենաթանկ արժեքը՝ երեխան։ Ստացվում է մարդու պահանջմունքներին բնորոշ այս օրինաչափությունը, եթե գործում է անգամ մարդու համար ամենաթանկ արժեքների դեպքում, ապա առավել վառ և ցայտուն կգործի, երբ երեխաների տեղում լինի անձի համար երեխաներից ոչ կարևոր արժեք, օրինակ՝ նյութական միջոցը, գումարը։ Իսկ ներկայացված կանոնն էլ ավելի վառ կգործի այն դեպքում, երբ այդ գումարն անհրաժեշտ լինի ծնողին իր երեխաներին հաց և ապրուստ հայթայթելու համար։ Եթե մարդը կանգնած լինի երկրնտրանքի առջև՝ քաղցած մնալ ընտանիքով՝ մատնվելով սովամահության, թե խախտել օրենքը՝ ցուցաբերելով կոռուպցիոն վարքագիծ (օրինակ՝ վերցնել ընտրակաշառք), ապա կարելի է ասել նման իրավիճակում մարդկանց մեծ մասը կընտրի երկրորդ տարբերակը։

Այստեղ պատճառը նույնն է՝ մարդու պահանջմունքը։ Փորձենք հասկանալ, թե ինչու։ Անձի հակադրուպիոն վարքագիծը գտնվում է էլ ավելի վերին սանդղակում, քան մարդու ֆիզիոլոգիական,

անվտանգության և սիրո պահանջմունքները, իսկ անձը չի կարողանում հասնել այդտեղ, քանի որ մինչ այդ առկա պահանջմունքները բավարարված չեն:

Իսկ թե պահանջմունքների հիերարխիայի ո՞ր սանդղակում է ընկած անձի հակակոռուպցիոն վարքագիծը՝ փորձենք հասկանալ:

Մենք այն գետեղել ենք պահանջմունքների հիերարխիայի բուրգի գագաթում, որտեղ ինքնաիրականացման պահանջմունքը կլինի բավարարված, քանի որ ինքնաիրականացված անձին է բնորոշ պատշաճությունը, շրջապատը հարգելու ունակությունը: Ինքնաիրականացված մարդն ազատ է իր գործողություններում, միայն թե իր գործողությունները չվնասեն այլ մարդկանց⁵: Ինքնաիրականացված մարդն ունի նաև մի շարք այլ դրական հատկանիշներ, որոնցից են մարդկության հետ միասնական լինելու զգացումը, քննադատական մոտեցումն այն մշակույթին, որին ինքը պատկանում է:

Ինքնաիրականացված մարդն ունի նաև ներքին բարոյական նորմերի կայունություն: Նա ընտրում է լավ կողմերը, իսկ վատերը մերժում է, ունի չարի ու բարու սուր զգացում, կողմնորոշված է դեպի նպատակը, իսկ միջոցները միշտ հնազանդվում են իրեն⁶: Վերջիններս խիստ անհարժեշտ հատկանիշներ են օրինապահ և հակակոռուպցիոն վարքագիծ դրսևորելու համար:

Բացի այդ, յուրաքանչյուր պահանջմունքի բավարարում մարդուն դարձնում է ավելի ուժեղ, ավելի կատարյալ և ավելի առողջ⁷:

Պահանջմունքների բավարարումը բարձրացնում է անձի դիմադրողականությունը, ուստի նաև՝ հակակոռուպցիոն դիմադրողականությունը:

Կարող ենք ասել ինքնաիրականացված անձին բնորոշ է հակակոռուպցիոն վարքագիծը: Այն պահանջմունքների բուրգում հիմնականում կգտնվի ամենավերին հատվածում:

Այսպիսով, գտնում ենք, որ մինչև որոշ չափով չբավարարվեն անձի առաջնային՝ ներքին սանդղակում գտնվող պահանջմունքները, անձը դժվար թե ունենա հակակոռուպցիոն վարքագիծ:

Այլ կերպ ասած՝ մարդիկ, ում պահանջմունքներն ըստ հիերարխիայի բավարարված չեն, հնարավոր է ցուցաբերեն կոռուպցիոն վարքագիծ, քանի որ անձի հակակոռուպցիոն վարքագիծը, գտնվելով բուրգի վերին հատվածում, պահանջում է, որ մինչ իրեն (հինգերորդ սանդղակին) հասնելը բավարարված լինեն մյուս պահանջմունքները՝ նախևառաջ ֆիզիոլոգիական, այնուհետև՝ անվ-

տանգության, սիրո և պատկանելության, այնուհետև հարգանքի և ինքնահարգանքի, ինքնաիրականացման:

Վերջիններս բավարարելուց հետո անձը կարող է ինքնաիրականացվել, իսկ արդեն ինքնաիրականացված մարդու համար կարևոր բնութագիչ առանձնահատկություններից կլինի հզոր անհատականությունը, որի դրսևորումներից է օրինապահ և հակակոռուպցիոն վարքագիծը:

Նույնիսկ այն անձը, ով օժտված է հակակոռուպցիոն վարքագծով և հակակոռուպցիոն դիմադրողականությամբ, կդժվարանա դրսևորել վերջիններս այն պայմաններում, երբ հատկապես ֆիզիոլոգիական պահանջմունքները զուլի բարձրացնեն: Այդ ժամանակ ոչ իր ունեցած հարգանքը օրենքի նկատմամբ, ոչ էլ անգամ քրեական պատժի ենթարկվելու գաղափարը հետ չեն պահի նրան: Օրինակ՝ Հին Հռոմում գրպանահատության համար ամբոխի առջև հրապարակայնորեն գրպանահատներին կախաղան էին բարձրացնում, բայց ամենաշատ գրպանահատությունը տեղի էր ունենում հենց այդ ժամանակ⁸: Այսինքն՝ կարիքը ստիպում է մարդուն մի կողմ դնել անգամ մահով պատժվելու վախը:

Քաղցած և անօթևան երեխաներ ունեցող ընտանիքի հայրը դժվար թե առաջինը մտածի պետության արժեքների, օրենքների պահպանման վերաբերյալ. նա առաջին հերթին կմտածի իր և իր երեխաների համար ինչ-որ ուտելիք հայթայթելու մասին, և եթե նման պայմաններում իրեն առաջարկեն ընտրակաշառք, նա առաջին հերթին կլուծի օրվա հացի խնդիրը, այլ ոչ թե պետության ապագայի ճակատագիրը: Ուստի կարծում ենք՝ ֆիզիոլոգիական պահանջմունքների անբավարարությունն ինքնին կոռուպցիոն վարքագծի պատճառ կարող է հանդիսանալ:

Ֆիզիոլոգիական պահանջմունքի բավարարման համար անձը շատ ավել բաների պատրաստ կարող է լինել՝ մինչև անգամ հայտնի են բազմաթիվ հանցիքալիզմի փաստեր սովի ժամանակներում: Չէ՞ որ ինքնապահպանման բնագործ կյանքի հիմնական օրենքն է: Մարդը ձգտում է պաշտպանել իր և իր հարազատների կյանքը: Հանուն դրա նա երբեմն կարող է դիմել ամեն միջոցի⁹:

Իհարկե, ինչպես յուրաքանչյուր կանոն, այս կանոնը նույնպես ունի բացառություններ: Հիշենք հնդիկ հասարակական ակտիվիստ Աննա Հազարիին, ով դեկավարում էր Հնդկական հակակոռուպցիոն շարժումը:

Կոռուպցիայի դեմ պայքարելու համար նա մի քանի անգամ հացադուլ է հայտարարել, որպեսզի ստիպի պետական մարմիններին պայքարելու կոռուպցիայի դեմ: Հացադուլը վերածվել է նաև համազգային ակցիայի: Ա. Հազարին 1980-ական թվականների կեսերին որոշում է կայացրել անգամ հրաժարվել սեռական կյանքից, որպեսզի «գուր էներգիա չվատնի»¹⁰ և ամբողջապես նվիրի իրեն կոռուպցիայի դեմ պայքարին: Նշենք նաև, որ իր պայքարն ապարդյուն չի եղել, կոռուպցիայի դեմ պայքարի գործում նա մեծ հաջողությունների է հասել:

Ինչևէ, նման մարդիկ շատ փոքր թիվ են կազմում, ովքեր ճնշում են իրենց ֆիզիոլոգիական, անվտանգության պահանջմունքները՝ մնալով քաղցած, անքուն, վտանգում են իրենց անվտանգությունը և ամենը հանուն կոռուպցիայի դեմ պայքարի:

Վերադառնալով մարդկանց մեծամասնության վարքագծին՝ նշենք, որ ոչ միայն ֆիզիոլոգիական պահանջմունքի անբավարարությունը կարող է ծնել կոռուպցիոն վարքագիծ, այլ նաև անձի անվտանգության պահանջմունքի անբավարարությունը:

Այն դեպքում, երբ անձի անվտանգության պահանջմունքը բավարարված չէ, անձը կարող է հակված լինել խախտելու օրենքը, քանզի երկրորդ սանդղակում առկա պահանջմունքի անբավարարությունը հինգերորդ սանդղակին հասնելու խոչընդոտ կլինի: Արտակարգ իրավիճակներում գտնվող անձը (իրավիճակ, երբ բավարարված չէ անձի անվտանգության պահանջմունքը), դժվար թե մտածի պետության արժեքների և օրենքների պահպանման մասին: Օրինակ՝ փոթորկի ժամանակ ավտոմեքենայով ինքնամոռաց սլացող վարորդը չի ենթարկվի լուսացույցի կարմիր լույսին: Ֆորսմաժորային իրավիճակում, երբ մարդու անվտանգությունը կասկածի տակ է, անձը պատրաստ է խախտել օրենքները: Ավելին՝ օրենսդիրը, հաշվի առնելով այդ իրականությունը, որոշ արտոնություններ է այդ մասով նախատեսել անձի համար:

Իհարկե, անվտանգության պահանջմունքի անբավարարության ներկայացված կանոնը չդիտարկենք միայն ծայրահեղ՝ արտակարգ իրավիճակների տեսանկյունից:

Դիտարկենք այլ իրավիճակ՝ երբ վտանգված է անձի հոգեկան անվտանգությունը:

Օրինակ՝ ծնողը զգում է որդուն կորցնելու մեծագույն վտանգ, երբ մտածում է, որ իր որդին զին-

վորական ծառայության պետք է անցնի վտանգավոր գոտում:

Այս իրավիճակում, երբ անձի մոտ առկա է երեխային կորցնելու իրական վախ, նրա հոգեկան անդորրը և անվտանգությունը խարխիվում է (քննարկվող տեսանկյունից ասված՝ երկրորդ սանդղակում գտնվող պահանջմունքի անբավարարություն): Վերջինիս պատճառով, տվյալ իրավիճակում, երբ նրան առաջարկեն կոռուպցիոն գործարք, մասնավորապես, ազատել որդուն նման պարտականությունից կաշառքի դիմաց, ապա հավանականությունը մեծ է, որ նա կցուցաբերի կոռուպցիոն վարքագիծ: Իհարկե այստեղ, որոշման կայացման գործում մեծ դեր են խաղում նաև մի շարք այլ հանգամանքներ՝ մասնավորապես, թե ինչ անձնային հատկանիշներով է օժտված տվյալ անձը, ինչ դաստիարակություն է ստացել, ինչ արժեհամակարգ ունի, ինչ չափով է արտահայտված երեխային կորցնելու վախը և այլն:

Այն պայմաններում, երբ անձի արժեհամակարգում պետությունը և օրենքը ավելի ստորին սանդղակում են գտնվում, քան որդուն կորցնելու վախի չափը, ինչպես նաև այն պայմաններում, երբ կաշառքի արժեքը և գործարքի այլ նմանատիպ պայմանները տվյալ անձի և վերջինիս գրպանին հարմար են, ապա մեծ է հավանականությունը, որ կոռուպցիոն գործարքը կկայանա:

Մեր կողմից 2014-2018 թվականներին անցկացված հակակոռուպցիոն դասընթացների ժամանակ հարցում ենք անցկացրել պետական համակարգում աշխատող հազարից ավել անձանց շրջանակում: Հարցը հետևյալն էր. «Եթե Ձեր որդին զինվորական պարտականության անցնելու լիներ այնպիսի սահմանամերձ գոտում և լարված ռազմական դրության ժամանակ, որ Դուք վստահ լինեիք, որ հավանականություն չկա, որ նա հետ կվերադառնա, նման պայմաններում ծառայության անցնելու դեպքում, կտալի՞ք կաշառք (իհարկե, եթե ունենայիք կաշառքի համար անհրաժեշտ գումարը և համապատասխան կապերը) այն քանի համար, որ նա առավել անվտանգ հատվածում իրականացներ իր զինվորական պարտականությունը, կամ, առհասարակ, չիրականացներ»: Իհարկե, ելնելով մարդու պահանջմունքների բնույթից՝ մենք սպասում էինք, որ հարցվածների մեծամասնությունը կպատասխանի այդ հարցին դրական, սակայն չէինք սպասում, որ բոլոր հարցվածները կպատասխանեն դրական՝ ինչը և կատարվեց հարցվածների բոլոր խմբերում: Բոլորը պատասխանեցին, որ կտա-

յին կաշառք, եթե իմանալին, որ իրենց որդին հետ չի վերադառնալու: Միանշանակ, այս ամենը նույնպես վկայում է այն մասին, որ անձը պատրաստ է ցուցաբերել կոռուպցիոն վարքագիծ, եթե իր հոգեկան անվտանգության պահանջմունքը գոնե որոշ չափով բավարարված չլինի:

Մինչդեռ, այս պարագայում, նույնպես ունենք բացառություններ և օրինակներ, որոնք հակառակը կարող են ցույց տալ: Բերենք օրինակ Հռոմի պատմությունից: Խոսքը վերաբերում է Իտալիան միավորվելու համար պատերազմից մի դրվագի մասին: Կոնսուլ Տիտ Մանլի Թոռկվատին լատինացիների հետ ճակատամարտի ժամանակ, նկատի ունենալով, որ լատինացիները գրեթե չեն տարբերվում հռոմեացիներից իրենց լեզվով և սպառազինությամբ, հնարավոր սխալից խուսափելու համար խստորեն արգելեց շարքից դուրս մարտնչել թշնամու հետ: Այդ հրամանը խախտվեց հենց իր որդու կողմից, ով ընդունեց լատինացի ժամապահ պարեկայինի կանչը և կռվեց նրա հետ: Թեև նա դուրս եկավ հաղթանակած, այնուամենայնիվ, արգելքը խախտելու համար հայրը հրամայեց գլխատել որդուն, ինչն էլ կատարվեց¹¹:

Ինչևէ, նման բացառությունները շատ քիչ են: Բացի այդ՝ հնարավոր է տվյալ օրինակում հոր անվտանգության պահանջմունքը եղել է բավարարված, քանի որ այն կապ չի ունեցել որդու կյանքի անվտանգության հետ:

Հաճախ անձի անվտանգության պահանջմունքը սերտորեն կապված է լինում ազատություն ձեռք բերելու պահանջմունքի հետ:

Մարդը կարող է մեծ տագնապայնություն և վտանգ զգալ այն պայմաններում, երբ գտնվում է անազատության մեջ: Ուստի, ինչպես անձի անվտանգության պահանջմունքի ակտիվացումը, այնպես էլ ազատության ձգտման և անկախության պահանջմունքը կարող է բերել բացասական հետևանքների: Հանուն ազատության մարդիկ հաճախ կոռուպցիոն ճանապարհով փորձում են խուսափել զինվորական ծառայությունից, ազատագրված դատապարտված անձիք դիմում են փախուստի ազատագրված վայրից, կոռուպցիոն եղանակով փորձում են խուսափել քրեական պատասխանատվությունից: Պատճառներից մեկն այն է, որ անազատության մթնոլորտում շատ մարդկանց մոտ առաջանում է հոգեկան անվտանգության խարխուլում, որն էլ կարող է բերել կոռուպցիայի: Գերմանիայի օրենսդրությունը, հաշվի առնելով այս իրականությունը, փախուստի դիմած բան-

տարկյալին այդ արարքի համար քրեական պատասխանատվության չի ենթարկում: Այնտեղ ազատագրված վայրից փախուստի դիմելը օրենքի խախտում չէ:

Այն դեպքում, երբ բանտարկյալը հաջողությամբ փախուստի է դիմել, սակայն, արդյունքում, բռնվել է, նրան հետ են ուղարկում շարունակելու սահմանված պատժաժամկետը: Այդ անձի հանդեպ չի հարուցվում նոր քրեական գործ, չի երկարացվում պատժի ժամկետը և չեն սահմանվում տուգանքներ: Գերմանիայի դատախիզական համակարգի նման մեղմ մոտեցան պատճառն այն է, որ դեռևս 1880թ. գերմանական դատարանը հանգել է այն եզրակացության, որ ազատության ձգտումը մարդու հիմնական բնագոյներից է, ուստի դրա դեմ պայքարն անիմաստ է և անարդյունք:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք նաև, որ անվտանգության պահանջմունքի անբավարարության պարագայում անձը նույնպես կարող է ցուցաբերել կոռուպցիոն վարքագիծ՝ փոխարենը հոգեկան անվտանգության պահանջմունքը բավարարելու համար:

Դիտարկելով, թե ինչպես առաջին և երկրորդ խմբերի մեջ մտնող պահանջմունքները կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ, այժմ անդրադառնանք մյուս պահանջմունքներին՝ սիրո և պատկանելիության, հարգանքի, ինքնաիրականացման, որոնց անբավարարությունը կարծում ենք նույնպես կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Սիրո պահանջմունքը հաճախ կարող է դրդել անձին դիմելու ամենաանհավանական քայլերի, որոնց մեջ է նաև կոռուպցիոն վարքագիծը: Վերոնշյալ օրինակը՝ որդուն կորցնելու վախը, կապված է նաև սիրո և պատկանելիության պահանջմունքի հետ (սեր որդու նկատմամբ):

Հարգանքի և ինքնահարգանքի պահանջմունքի անբավարարությունը նույնպես կարող է հանդիսանալ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Օրինակ՝ մարդ կարող է տալ խոշոր չափի կաշառք մի պաշտոնի հավակնելու համար, որն իրեն մեծ հոնորարներ չի խոստանում: Վերջինս իրեն անհարաժեշտ է միայն ճանաչման, հարգանք ձեռք բերելու, ինչպես նաև ինքնահարգանքի համար, այսինքն՝ չորրորդ պահանջմունքի բացը լրացնելու համար:

Անձի ինքնահաստատման պահանջմունքն իր էությամբ և բովանդակությամբ ներառում է անձի ինքնաիրականացված լինելու պահանջմունքը: Արդեն ինքնաիրականացված անձին, ինչպես վերը

նշվեց, բնորոշ կլինի հակակոռուպցիոն վարքագիծը, իսկ նման անձի բնութագրից ելնելով՝ կարող ենք ասել, որ նման մարդը ցանկություն կունենա հասարակության համար կատարելու որևէ դրական գործ, ինչպես Հին Հռոմում էր՝ սկզբնական ժամանակահատվածում:

Հռոմեական պետությունը մինչ Ք.ա II դարաշրջանը հայտնի էր մի հանրությամբ, որին ծանոթ չէր կոռուպցիան: Այն խոր արմատներ ունեցող ժողովրդավարական պետություն էր, որտեղ մարդիկ ունեին քաղաքացիական պատասխանատվության զարմանալի զգացողություն: Հասարակության կողմից ընտրված իշխանությունը՝ կոնսուլները, պրետորները, էդիլները և այլոք, չէին ստանում վարձատրություն: Մինչդեռ զարմանալին այն էր, որ շատ էր այդ պաշտոններին հավակնող անձանց թիվը:

Ընտրությունները, որպես կանոն, տեղի էին ունենում ամեն տարի, և յուրաքանչյուր պաշտոնի համար առկա էին բազմաթիվ հայտատուներ:

Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ շատ հռոմեացիներ հանուն հասարակության որևէ լավ գործ կատարելու պահանջմունք ունեին: Հասարակության կողմից ընդունված զգալու ցանկությունն ավելի կարևոր էր, քան նյութական վարձատրությունը: Այդ ժամանակշրջանում մարդկանց առաջնային պահանջմունքներն այնքան փոքր են եղել և շուտ բավարարվող, որ նյութական վարձատրությունն էական չի եղել: Եվ հակառակ՝ հանուն հասարակության լավ գործ կատարելու պահանջմունքը առաջնային է եղել¹²:

Մինչդեռ Հին Հռոմում իրավիճակը անճանաչելիորեն փոխվեց:

Կոռուպցիան արմատներ դրեց նաև այնտեղ: Եթե Ք.ա III դարում, եթե մի քանի անվանի սենատորներ չէին կարողանում իրենց թույլ տալ ունենալ գոնե մեկ հավաքածո արծաթյա սպասք, ապա արդեն Ք.ա I դարում ոմն Լիվի Դրուզն ուներ հինգ տոննա արծաթյա և ոսկյա իրեր: Նույնիսկ այնպիսի սենատորն, ինչպիսին Յիգերոնն էր, տասը վայրերում ամրոցներ ուներ՝ չհաշված Հռոմում հինգ բնակարանները և վեց գյուղական տները¹³: Եվ եթե նախկինում բոլոր սենատորները քաղաքում տեղաշարժվում էին ոտքով, ապա շատերն արդեն տեղաշարժվելու համար սկսեցին օգտագործել ծածկասայլակներ, որոնց ուղեկցում էին մի քանի տասնյակ ստրուկներ: Նախկին համեստ հռոմեական ճաշերը վերածվել էին զինարքությունների, որտեղ մատուցվում էին տասնյակ ուտեստներ: Անգամ

իրենց տրամադրության տակ ունեին հատուկ սենյակ, որտեղ կարող էին դատարկել իրենց ստամոքսը՝ նոր ուտեստներ համտեսելու համար: Ինչպես գրում էր Սենեկան՝ հռոմեական հասարակությունում մարդիկ ամենուր փնտրում էին հաճույք, ճոխության ծարավը տանում էր ագահության: Եվ այն, ինչը բերում էր հաճելի պարզ, չէր համարվում ամոթալի¹⁴: Ի՞նչն էր պատճառը բարոյականության նման փոփոխության:

Որոշ հեղինակներ մատնանշում էին այն, որ հռոմեական բարոյակրթության կանոնները փչացել են Ք.ա II դարաշրջանում մեծ նվաճումների պատճառով, որոնք հռոմեական վերնախավին բերեցին մեծ հարստություն: Առաջացավ ագահության և նախանձի աննախադեպ աճ, և որպես հետևանք ամենը բերեց կոռուպցիայի¹⁵: Կոռուպցիոն տեսանկյունից դիտարկելով, թե ինչ իրավիճակ էր Հռոմում Ք.ա I դարում կարող ենք ասել, որ այդտեղ գործում էին արդեն ոչ թե նորմալ պահանջմունքները, որը նախկինում էր, այլ գերաճած պահանջմունքները, ցանկությունները, ագահությունը, որոնք իրենց հերթին արդեն այլ մեխանիզմով կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառներ: Մասնավորապես, ագահության արմատները գալիս են դեռևս մարդկության պատմության հին ժամանակներից, երբ նախամարդկանց անընդհատ չէր բավականացնում ուտելիքը և այլ ռեսուրսները, որի պատճառով մարդու մոտ ագահության արմատները, ըստ երևույթին, դրված են ԴՆԹ-ի հարթությամբ: Երեխաների մեջ այն երևում է դեռևս վաղ հասակից: Վաղ տարիքից կարելի է տեսնել, թե ինչպես են երեխաները խլում միմյանցից խաղալիքները, կոնֆետները: Հիմնականում նրանք չեն սիրում կիսվել իրենց փոքրիկ արժեքներով այլ երեխաների կամ մեծահասակների հետ:

Հետագայում արդեն անչափահասները փորձում են կառավարել իրենց ագահությունը, քանի որ այստեղ սկսում են խոսել բարոյական նորմերը, դաստիարակությունը: Մինչդեռ ագահությունը ոչ մի տեղ չի կորչում, այլ թաքնվում է հոգու խորքում և ստանում է նոր ձևեր¹⁶:

Այսպիսով, կարող ենք ասել, որ կոռուպցիոն վարքագծի պատճառ կարող են դառնալ նաև մարդու ոչ նորմալ, այսինքն՝ գերաճած պահանջմունքները, որի դրսևորումներից է՝ ագահությունը: Շատ այլ հանցագործություններ մույնպես պայմանավորված են մարդկային ագահությամբ՝ բնակարանային գողություններ, կողոպուտներ, մինչև անգամ շահաղիստական նպատակով սպանություններ¹⁷:

Կարծում ենք, որ ոչ միշտ է, որ գուտ պահանջ-
մունքների անբավարարությունն է հանդիսանում
անձի կոռուպցիոն վարքագծի պատճառ. հաճախ
կոռուպցիոն վարքագծի համար անհրաժեշտ են
նաև անձի մեջ առկա հանցավոր նախադրյալներ,
որոնցից կարող են լինել անձի ոչ ճիշտ արժեհամա-
կարգը, որտեղ պետությունը և օրենքը կգտնվեն
ներքին սանդղակներում, պահանջմունքների խե-
ղաթյուրված համակարգը, մտածելակերպը, հա-
մոզմունքները, անձի սոցիալականացման մեջ առ-
կա քրեածին գործոնները և այլն: Այլ կերպ ասած՝
անձը կարող է ցուցաբերել կոռուպցիոն վարքագիծ
ոչ միայն մեկ պատճառով՝ պահանջմունքների ան-
բավարարության, այլ նաև այն պատճառով, որ
պահանջմունքների անբավարարվածության հետ
մեկտեղ առկա են այլ հանցավոր նախադրյալներ:
Պահանջմունքները, որպես այդպիսին, հանցավոր՝
կոռուպցիոն բնույթ չունեն: Այստեղ կոռուպցիոն են
ոչ թե անձի պահանջմունքները, այլ տվյալ անձի
վարքագիծը, իսկ վերջինս էլ կախված է անձի պա-
հանջմունքի բավարարման միջոցի ընտրությունից,
անձի բարոյական ուղղվածությունից, անձի արժե-
համակարգից, անձի սոցիալականացման գործոն-
ներից և այլ հանգամանքներից: Իհարկե չենք հեր-
քում նաև ոչ հաճախ հանդիպող դեպքերը, երբ ան-
ձի կոռուպցիոն վարքագծի պատճառ կարող է լի-
նեն միայն պահանջմունքների անբավարարությու-
նը: Տվյալ դեպքում պահանջմունքները ընդհանրա-
պես բավարարված չեն լինում:

Կարող է հարց առաջանալ՝ երբ նշում ենք, որ
պահանջմունքը պետք է լինի բավարարված, ո՞րն է
այդ բավարարման չափը: Հարցի պատասխանը
միանշանակ մեկն է՝ այդ չափը յուրաքանչյուր ան-
ձի մոտ անհատական է: Չէ՞ որ մի անձ կարող է իր
քաղցի պահանջմունքը բավարարել մեկ կտոր հա-
